

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀՈՎԱՅՓԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ

**ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Ժ. 02. 01- «Հայոց լեզու» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Պաշտոնական բանասիրական գիտությունների դոկտոր,
ընդդիմախոսներ՝ պրոֆեսոր **Գ.Կ.Խաչատրյան**

բանասիրական գիտությունների դոկտոր
Ռ.Մ.Թոխմախյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Թ.Ս.Շահվերդյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հունվարի 23-ին՝ ժամը 15⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ Երևան, 0015, Գ. Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. դեկտեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բարբառագիտության կարևոր խնդիրներից է բարբառային բառազանձի ուսումնասիրությունը: Ինչպես գրական լեզվի, այնպես էլ բարբառների բառագիտության համար անհրաժեշտ է բառապաշարի իմաստային (թեմատիկ) խմբերի ամբողջական քննությունը: Հայերենի բարբառների բառապաշարի իմաստային (թեմատիկ) խմբերի գերակշիռ մասը մինչև օրս լիովին ուսումնասիրված չէ:

Սույն աշխատանքը նվիրված է հայերենի բարբառների կրոնական-եկեղեցական (կրոնանեկեղեցական) բառապաշարին՝ իր ձևաիմաստային տարբերակվածության և հոգևոր-մշակութային դրսևորման մեջ: Բարբառների կրոնանեկեղեցական բառապաշարը ամբողջական քննության ենթարկված չէ: Բարբառագետները երբեմն միայն անդրադարձել են կրոնանեկեղեցական որոշ բառերի նկարագրությանը:

Յուրաքանչյուր կրոն և դրանից բխող հավատալիքները, նախապաշարումները, դրանցով պայմանավորված կրոնական արարողությունները, ընդունված ծիսակարգը լեզուն համալրում են նորանոր բառերով և արտահայտություններով, դարձվածքներով, առածներով, ասացվածքներով, ինչպես նաև բանահյուսական այլ միավորներով: Մեր ժողովրդի պատմությամբ պայմանավորված՝ հայերենի բարբառներին հիմնականում բնորոշ են հեթանոսական և քրիստոնեական կրոններին առնչվող բառեր և արտահայտություններ: Հայաստան ներթափանցած աղանդները հայերենի բարբառներում առանձնահատուկ բառաշեղծությամբ արտացոլված չեն: Վերջին տասնամյակներին հավաքված բարբառագիտական մեծաքանակ նյութը հնարավորություն է տալիս կատարելու բարբառներում տեղ գտած կրոնանեկեղեցական բառերի (տերմինների) հնչյունաբանական, բառակազմական, իմաստաբանական, տարածքային-գործառական և ոճական յուրահատկությունների առանձին և հնարավորինս ամբողջական քննություն:

Ատենախոսության մեջ կատարել ենք կրոնանեկեղեցական բառապաշարի իմաստագործառական դասակարգում, հոմանշային շարքերի և դարձվածքների, բանահյուսական միավորների առանձնացում և քննություն, հնչատարբերակների գործառության մանրակրկիտ ուսումնասիրություն և վերլուծություն՝ շեշտը դնելով հիմնականում բառապաշարի իմաստաբանական քննության վրա, որոշել ենք այս կամ այն բառի որևէ տարածքում գործառվելը կամ չգործառվելը, բարբառների մեծ մասին, թե՞ բարբառային կղզյակներին բնորոշ լինելը: Անդրադարձել ենք նաև բարբառներին բնորոշ ծածկալեզվային բառերին և բառաձևերին, նշել բարբառային բառերի ոճաբանական դրսևորումները:

Բարբառների կրոնանեկեղեցական բառապաշարը ուսումնասիրելու նպատակով կազմել ենք էլեկտրոնային համապատասխան բառացանկ-հավելված, որում

գրանցել ենք գրաբարի և միջին հայերենի բառարաններում ավանդված խնդրո առարկա իմաստային (թեմատիկ) խմբին պատկանող կրոնական բառը որպես գլխաբառ, ապա նրա բարբառային արտացոլում հանդիսացող միավորները, հասկացական նույն միավորի դիմաց տարբեր վայրերում գրառված տարբեր հնչյունական կամ անվանողական զուգաբանությունները, դրանցով կազմված դարձվածքներն ու արտահայտությունները, առածներն ու ասացվածքները, երգման, օրհնության, բարեմաղթանքի և անեծքի կառույցները:

Իմաստային խմբի յուրաքանչյուր ենթախմբում վերլուծության ենթ ենթարկել կրոնատեղեղեցական բառերի և բառակապակցությունների, դարձվածային միավորների իմաստաբանական դրսևորման բնույթը բարբառներում, քննել բարբառային մենիմաստությունը, բազմիմաստությունը, հոմանշությունը, նույնանշությունը, հականշությունը և այլն:

Բառապաշարի քննությունն իմաստային խմբերով ներկայացնելիս դրանց ներսում անդրադարձել ենք իմաստափոխության եղանակներին, փոխառյալ կամ բնիկ լինելուն, բառակազմական առանձնահատկություններին ու իրողություններին և բառապաշարի քննության ավանդական եղանակներին բնորոշ այլ դրսևորումներին:

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Հայերենի մի քանի տասնյակից ավելի բարբառների առանձին մենագրական քննությունից, ինչպես նաև նրանց միահատկանիշ (ձևաբանական կամ միապլան), այլև բազմահատկանիշ (հնչյունական, բառաքերականական կամ բազմապլան) դասակարգումներից հետո ըստ իմաստային (թեմատիկ) խմբերի քննությունը վերջին տարիներին դարձավ հայ բարբառագիտության առաջնահերթ խնդիրներից մեկը: Հայերենի բարբառների ուսումնասիրությանը նվիրված բավականին հարուստ գիտական նյութերը հիմնականում վերաբերում են բարբառների ընդհանուր քննությանը: Դրանցում ներկայացված են որևէ տարածքի բնորոշ բարբառի կամ խոսվածքի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական ընդհանուր բնութագիրը և այլ հարցեր: Այդպիսի աշխատանքները տվյալ բարբառը կամ խոսվածքը դիտարկում են ընդհանուր կողմերով՝ նպատակ չունենալով խորանալու հնչյունական, բառակազմական, բառագիտական, ոճական և այլն առանձնահատկությունների մեջ առանձին-առանձին: Այսօր անհրաժեշտություն կա լեզվական որևէ իրողություն քննարկելու հայերենի բոլոր բարբառների ընձեռած նյութի սահմաններում: Թեմայի ընտրությունը պատահական չէ այնքանով, որքանով որ հայ բարբառների նման ուսումնասիրությունը երևան է հանում այնպիսի իրողություններ, որոնք լուսաբանում են հայոց լեզվի և նրա տարածքային տարբերակների պատմության հարցերը:

Փիտական նորույթը: Ուսումնասիրության նորույթն այն է, որ առաջին անգամ բարբառային բառապաշարի մաս կազմող կրոնատեղեղեցական բառերը քննվում են որպես առանձին կոնկրետ իմաստային (թեմատիկ) խումբ: Համակողմանի քննության նյութ են դառնում այդ խմբի իմաստային այլ միավորներ և՛ դարձվածքները, բառակապակցությունները, նկարագրական բնույթի արտահայտությունները, հոմա-

նիշները, հականիշները, համանունները, հարանունները, բարբառային բառակազմական երևույթները:

Հետազոտության արդյունքում երևան են գալիս բառիմաստային հետաքրքրական իրողություններ, որոնք արժեքավոր են ոչ միայն հայոց լեզվի տարածքային տարբերակների ուսումնասիրման և բառապաշարի փոփոխությունների տեսանկյունից, այլև որոշակի պատկերացում են տալիս մեր ժողովրդի պատմության, ազգագրության, տեղաշարժերի, կրոնական ընկալումների, հավատքի, հոգևոր կառույցների, դավանանքի, նվիրապետության, այլ ժողովուրդների հետ ունեցած շփումների, մշակութային ներթափանցումների, առհասարակ հոգեմտավոր զարգացման և առաջընթացի վերաբերյալ: Ուսումնասիրությունն արժեքավոր է նաև բարբառների ընդհանուր բառապաշարի քննության համար՝ առհասարակ, կրոնա-եկեղեցական և դավանաբանական իմաստային խմբի դեպքում՝ առանձնապես: Երևույթի նման ընդգրկմամբ քննությունն ունի բացառիկ նշանակություն բարբառների բառապաշարի իմաստային (թեմատիկ) այլ խմբերի վերլուծության համար:

Ուսումնասիրության փաստական նյութը: Ուսումնասիրության փաստական նյութը գրական հայերենի կրոնաեկեղեցական բառերի և տերմինների բարբառային տարբերակներն են, որոնք ի մի ենք բերել հայերենի բարբառների հետազոտությանը նվիրված մենագրություններից, բարբառային բանահյուսական գրականությունից, Ս. վրդ. Ամատունու «Հայոց բառ ու բան» աշխատությունից, Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ից և «Հայերէն գաւառական բառարան»-ից, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Հայերենի բարբառային բառարան»-ից, Ա. Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան»-ից, ինչպես նաև հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերի բառամթերքն ընդգրկող բառարաններից, ՀՀ ԳԱԱ լեզվի, նաև ազգագրության և հնագիտության ինստիտուտների բարբառային ձեռագիր նյութերից, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի շուրջ 500 բնակավայրերի՝ բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրին համապատասխան բարբառային գրանցումներով տետրերից: Բարբառային նյութեր հավաքելու, բարբառախոսների հետ անձամբ շփվելու, բարբառների ներկա իրավիճակը ուսումնասիրելու համար շրջել ենք ՀՀ, ԼՂՀ-ի, Զավախքի բնակավայրերի մեծ մասում, Սիրիայի Քեսաբի բոլոր գյուղերում, Արամոյում, Լաթաքիայում, Հալեպում, հարցումներ արել Նոր Զուղայի, Բեյրութի, Ալեքսանդրիայի հայությանը: 2012 - 2014 թթ. բարբառագիտական դաշտային աշխատանքներ ենք կատարել Թուրքիայի Հանրապետության եվրոպական մասում, Ստամբուլում, Բուքանիայում, Լեռնային և Դաշտային Կիլիկիայում, Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայում, Անկարայում, հարցումներ ենք կատարել Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր բնակավայրերի լեզվական իրավիճակի մասին, գրառումներ կատարել: Քանի որ կրոն և նախապաշարմունքը հասկացությունների անվանումները բավականին շատ են, ներառում են նախապաշարմունքի տարբեր ընկալումներ և կրոնական տարբեր ուղղություններ, ուստի մեր աշխատանքում չենք անդրադառնում հեթանոսությանը և մյուս կրոններին (գրադաշտականություն, բուդդայականություն, մոլվսիսականություն և այլն) վերաբերող բառաշերտին: Ուշադրության առարկա են

միայն քրիստոնեությանը, մասնավորաբար հայ առաքելական եկեղեցուն առնչվող բառերի և արտահայտությունների բարբառային արտացոլումները: Դրանք լայն տարածում ունեցող բառային միավորներ են, որոնք հիմնականում գալիս են հին գրական հայերենի (գրաբարի) շրջանից, մասամբ ստեղծվել են հետագայում, ընդ որում հիմնականում նոր գրական հայերենում (աշխարհաբարում), այլև որոշ չափով նաև բարբառներում: Հեթանոսական կրոնին առնչվող բառերը՝ *քուրմ*, *մեհյան*, *կրակարան*, *հեթանոս*, *բագին*, *ապրուշան*, *զոհարան* և այլն, մեր ուսումնասիրության ոլորտից դուրս են, չնայած նախաքրիստոնեական բազմաթիվ բառեր և արտահայտություններ հիմք են հանդիսացել քրիստոնյա համայնքների հաղորդակցման համար:

Ուսումնասիրության մեթոդները: Ուսումնասիրությունը կատարված է հիմնականում համաժամանակյա, որոշ դեպքերում նաև տարաժամանակյա մեթոդներով: Կենդանի բարբառների և խոսվածքների բառապաշարի կրոնակեղեցական շերտը բնութագրել ենք ըստ գործածականության հատկանիշի՝ ելակետ ունենալով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա բարբառային ձեռագիր նյութերի գրառման ժամանակը, մենագրությունների դեպքում՝ հրատարակության տարեթվերը, գիտարշավների ընթացքում մեր կատարած գրառումների ժամանակը: Այս ամենն ի մի բերելով՝ կարելի է ասել, որ այդ ժամանակահատվածն ընդգրկում է անցյալ դարի կեսից մինչև մեր օրերը ընկած ժամանակաշրջանը: Մեռած բարբառների գրառման համար ժամանակային այդ սահմանը հետադարձ տեղաշարժվում է XX դ. սկզբից մինչև XIX դ. կեսերը:

Կրոնակեղեցական բառերի տարածքային նկարագիրը տալիս ենք ըստ բարբառների բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների, որոնք մշակված են ակադ. Գ. Զահուկյանի աշխատություններում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, վեց գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, համառոտագրություններից և օգտագործված գրականության ցանկից (ընդամենը՝ 350 էջ): Շարադրանքի բաժիններն առանձնացնելիս առաջնորդվել ենք կրոնակեղեցական բառերի արտահայտած իմաստներով և իմաստային այս կամ այն դաշտին պատկանելով:

Ատենախոսության նախապաշտպանությունը: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում և երաշխավորվել պաշտպանության:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Աշխատանքում ներառված բանահյուսական նյութերը կարող են օգտագործվել բարբառների բառագիտությանը նվիրվող տարբեր բնույթի ուսումնասիրություններ կատարելու համար, լեզվական փաստեր տրամադրել բարբառային, նաև կրոնական բնույթի բառարաններ կազմելու, ինչպես նաև հասկացական–բառանվանողական, բառիմաստային զուգաբանություններ քննելու և ճշգրտելու համար: Ի մի բերված բարբառագիտական նյութը կնպաստի հայերենի բարբառների համապարփակ ուսումնասիրությանը: Բարբառ-

ների նման ուսումնասիրությունը գործնականում արժեքավոր է մեր ժողովրդի պատմության և ազգագրության, ինչպես և գրական հայերենների բառապաշարի ուսումնասիրության համար: Առկա բարբառային նյութը որոշակի արժեք է ներկայացնում կազմվող բարբառագիտական ատլասի և հայ բարբառագիտության զարգացման համար ընդհանրապես:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացվում է հարցի պատմությունը, հիմնավորվում են բարբառագիտական գիտաճյուղերի զարգացման անհրաժեշտությունը և ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ուղենշվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները:

Բարբառագիտության պատմության ներկա՝ տեսական ուսումնասիրությունների փուլում ուշադրության է արժանանում բարբառների իմաստաբանությունը, կատարվում են բարբառների բառապաշարին վերաբերող բառագիտական քննություններ: Մեր աշխատանքը նվիրված է հայերենի բարբառային բապաշարի իմաստաբանությանը, մասնավորապես կրոնաեկեղեցական բառերի հնչյունական և բառային այն զուգաբանություններին, որոնք գրական լեզվի ձևերի արտացոլումներ են տարբեր բարբառներում՝ այդուհանդերձ ունենալով որոշակի առանձնահատկություններ թե՛ հնչյունական մակարդակում, թե՛ իմաստային կամ բովանդակության պլանում:

Գլուխ 1. *Կրոնաեկեղեցական բառերը հին գրական հայերենում և դրանց անցումը բարբառներին:* Գրաբարի բառապաշարի մի որոշակի մասը քրիստոնեական (աստվածաբանական) ոլորտի բառեր և արտահայտություններ են, որոնց գերակշիռ մասն ավանդված է համապատասխան գրական հուշարձաններում (*աստուած, աստուածածին, արարիչ, աղօթք, պլէյուիա, սպաշխարել, անհաւար, արքայութիւն, առաքեալ, աւագերէց, բեմ, բագին, ծան «զոհ»* և այլն), հիմնականում բնիկ են (ունեն հնդեվրոպական ծագում), մասամբ փոխառություն են այլ լեզուներից կամ դեռևս անհայտ ծագման բառեր են, ընդ որում շարունակաբար գործածվել են միջին և նոր գրական լեզվում, այլև ունեցել են իրենց բարբառային դրսևորումները: Դրանք ներկայանում են ոչ միայն իբրև հին գրական հայերենի կրոն և նախապաշարմունք իմաստային խմբի միավորներ, այլև իբրև ընդհանուր կրոնական հավատալիք նշող և քրիստոնեական կարգին առնչվող բառեր. բարբառային (խոսակցական) տարբերակները զուգընթաց են միջին, առավել ևս նոր գրական հայերենի տարբերակներին, ուստի հարկ է եղել դրանց քննությունը սկսել բառապաշարի այն միավորներից, որոնք հետագա փոփոխություններով անցել են հայերենի նոր բարբառներին: Նման խմբավորմամբ վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ավելի ամբողջական և հիմնավոր պատկերացում կազմելու դրանց բարբառային դրսևորումների վերաբերյալ: Դրանք երկու կարգի են՝ 1) *ընդհանուր կրոնական հավատալիք նշող բառանուններ*, որոնք հայերենին են անցել Սուրբ գրքի և հարակից գրականության թարգմանության բերումով (*արարիչ, աստուած, բան, զոհ, զենումն, մեհեան, կուռք,*

սաղմոս և այլն), և 2) կոնկրետ քրիստոնեական կրոնին առնչվող, որոնք վերաբերում են քրիստոնեական վարդապետության դավանաբանությանը (առաքեալ, լուսատրչական և այլն), եկեղեցական շինություններին (անսպասար, վանք, եկեղեցի, բեմ, գալիթ և այլն), եկեղեցական ծիսակարգին (անդաստան, դրոշմ, աղաբողոն, անտարան, բուրվառ, նարուր և այլն), հոգևոր կարգին (նվիրապետությանը) (աբբա, արեղայ, եպիսկոպոս, քահանայ և այլն):

Գլուխ 2. Ընդհանուր գործածության կրոնական բառերի բարբառային բնութագիրը:

2.1. *Կրոնաեկեղեցական բառերը «Հայերենի բարբառագիտական արվասի նյութերի հավաքման ծրագրում»:* Ըստ ծրագրի գրանցված խոսվածքները սույն աշխատանքի համար ծառայել են որպես հիմնական աղբյուր: Տվյալ դեպքում առաջնային են եղել առկա խոսվածքային միավորներում ընդգրկված կրոնաեկեղեցական իմաստային (թեմատիկ) խմբին պատկանող բառերն ու դրանցով կազմված լեզվական միավորները: Առանձնապես լայն գործածություն ունեն *սուրբ* և *աստված* բաղադրիչով կազմությունների, աստվածամանի պատվանունների, *դրախտ* և *դժոխք*, այլև *աստանա* անվանումների բարբառային տարբերակները:

2.2. *Սուրբ* բառը մեծ մասամբ հանդես է գալիս հնչյունական տարբերակներով (թվով՝ 17), *սիր/սուսի/սըփ/սորփ* և այլն: *Սուրբ* բառից են կազմված *սրբոսի* պատվանունը և *Սրբոսի* հատուկ անունը՝ *-ուկ, -ուգ, -էգ, -իգ, -ուխ, -ուն* փաղաքջական վերջածանցներով և համապատասխան հնչատարբերակներով:

2.3. Մի շարք բարբառներում պահպանվում է *աստված* անվանման գրական ձևը, քիչ չեն նաև որոշակի տարբերակներ ներկայացնող բարբառները (թվով՝ 51), ընդ որում արևելյան և պարսկահայ տարածքում այն ավելի քիչ է, քան արևմտյանում: Այս բառով կամվում են բազմաթիվ բաղադրություններ, որոնք ևս հանդես են գալիս հնչյունական և իմաստային տարբերակներով (*աստվածապաշտ, աստվածասեր, անսավաց* և այլն): Մեծ թիվ են կազմում *աստված* բաղադրիչով արտահայտությունները, դարձվածքները, առածներն ու ասացվածքները (*աստված խաբուլ չէնա, մարթ աստուծո, աստված քու փուն չակօլէ* և այլն): ա) Բարձրյալի հանդեպ ունեցած վերապահական վերաբերմունքի պատճառով բարբառախոսները հակված չեն աստված խորհրդանշանը տարբեր բառային նշաններով, հատկապես օտարաբանություններով արտահայտելու: Ընդհանուր բարբառային գործառույթ ունի «աստված» գրական փոխառության հնչյունական տարբերակվածությունը՝ երբեմն առանձնահատուկ շեշտադրությամբ: բ) *Աստված* բառով արտահայտվում է սուրբ երրորդությունը և սակավադեպ են *հայր աստված, սուրբ հոգի աստված* և *որդի աստված* եռամիասնության որևէ կողմի հոմանիշները: Բարբառներին բնորոշ չեն *արարիչ, փրկիչ, բարձրյալ, երկնային փեր* և կրոնաեկեղեցական տերմինաբանությանը բնորոշ այլ անվանումներով կերտված կազմություններ: գ) *Աստված* բառով բաղադրված ձևաիմաստային միավորները հիմնականում կերտված են աստվածաշնչական թեմաներով, և առավել հետաքրքիր տարբերակները բնորոշ են արևմտյան խմբակցության բարբառներին: դ) Ոչ մի բարբառում չենք հանդիպում

աստծուն բնորոշող, դավանաբանական հասկացությունները բնութագրող բառաշարքերի: Շատ սակավ են աստվածաբանական բովանդակության կամ աստծու հատկանիշները բնորոշող բառերը (*ամենակալ, անաստվածություն, անարար, արքայություն* և այլն):

2.4. *Աստվածածնի պատվանունների բարբառային ձևերը:* Աստված հասկացությունը ընդհանուր է բոլոր հավատացյալների համար՝ անկախ նրանց կրոնից և դավանանքից, իսկ *աստվածածին* պաշտամունքային անվանումը բնորոշ է միայն քրիստոնեական դավանաբանությանը: Հին կտակարանում աստվածամայրը կոչվում է *կոյս, մայր, կին*, որոնք պատվանուն չեն: Պատվանուն են *տիրամայր, Նոր Եվա, Սիոնի // Դավթի դուստր* անվանումները: Ի տարբերություն գրական հայերենի *աստվածածին, աստվածամայր, տիրամայր* հոմանիշների (երբեմն՝ *սուրբ* կամ *սրբուհի* վերադիրով) բարբառներում առկա է դրանց մի քանի տասնյակ տարբերակներով գործածություն (թվով՝ 68). արևելյան և պարսկահայ տարածքներում՝ *ըստվածածին // աստղվածածին // աստածածին // ըստածին*, արևմտյանում՝ *աստվածածին // ասպածածին // ասվազազին* և այլն: Աստվածածին նվիրված սրբավայրերի անունները ևս բաղադրված են պատվանուններից՝ *Աստվածածին Վերին Կաթան, Մարութա Բարձր Աստվածածին, Ծիրանավոր (Աստվածածին), Կարմրավոր (Աստվածածին)* և այլն: Այս անվանմանն են առնչվում որոշ դաժվածքներ, առածներ, ասացվածքներ. *Աստվածամէր քավոր էրինք, կարկըրան մըզնէ ուզեց* (Բուլանուխ), *մայրամաթըռոկի* («զատկանման միջատ»), *ասպածամօր պանջար* («թելուկ»), *մայրամաճաշ, տիրամոր քամի, տիրամոր յարա* և այլն:

2.5. *Դրախտ և դժոխք* անվանումների սկզբնական իմաստը կապվում է *կրոնի* և *հավաքքի* հետ, և միայն փոխաբերական իմաստով են դրանք ձեռք բերում աշխարհիկ բովանդակություն (*ուղիղ իմաստ → կրոնական իմաստ → փոխաբերական իմաստ* անցումով): ա) *Դրախտ*-ի բարբառային տարբերակները հիմնականում հնչյունական են. հոմանիշներից են՝ *արքայութեն, ջաննաթ // ջեննաթ // ճենլեր*: բ) Բարբառներում *դրախտ* բառը անհամեմատ քիչ է գործածական, քան *դժոխք*-ը: Վերջինս աչքի է ընկնում հնչատարբերակների բազմազանությամբ և լայն տարածվածությամբ, այլև հոմանիշների տարբեր զուգորդությամբ (թվով՝ 51 հնչատարբերակ):

Դժոխք բառի ձևաիմաստային դրսևորումները տարբեր բարբառախմբերում զգալիորեն տարբեր են. *ուռ* և *լ* (կամ *ս // իս*) ճյուղի բարբառներում՝ թվով 12, *կը* ճյուղում՝ թվով 23:

2.6. *Սաբանա* բառը բարբառային բառապաշարի թերևս ամենագործածական ձևաիմաստային միավորներից է: Բավականին ընդարձակ բարբառային տարածքներում այն հանդես է գալիս բազմազան փոփոխակներով (կայուն են միայն բառասկզբի *ս* սուլականը և միջձայնավորային *ն* ձայնորդը), մյուս հնչյունները ենթակա են փոփոխության: *Սաբանայ* (Շամախի, Ուրմիա) ձևում ուշագրավ է գրաբարյան *յ* վերջնահնչյունի պահպանումը: Բարբառային մյուս վայրերում արձանագրված են մի շարք հնչյունական տարբերակներ (թվով՝ 25). *սադանո // սադանո //*

սաղօնա // սըւրա'նա// սըւրա'նէ և այլն: Հետաքրքրական է հոգնակիի ձևերի գործածությունը, որը, կարծում ենք, իմաստի խտացման նպատակ ունի՝ *սուրունօտէնք', սըւրնըքէր, սաւրանհյանհ, սաւրանէսւրանը* և այլն:

Մի շարք բարբառներում հանդիպում են *սաւրանա* հասկացությանը կից տարբեր նրբիմաստներով հոմանիշ բառեր՝ առաջ բերելով բազմիմաստություն. նման դեպքերում առաջին կամ հիմնական բառիմաստը սատանան է, երկրորդը՝ չարը կամ չար ոգին, որին զանազան բացասական հատկություններ են վերագրվում: Տարածագործառական լայն ընդգրկմամբ առանձնանում են հատկապես *գրող (կըրող/ կըրող), չարք (չարկ/ չարգ), սաղայէլ (սաթայիլ/ սաւրայէլ), դէվ (դէվա/ թէվ/ դիվ, ալք [ալ/ ալ(ք), ալապուծուկ], նէռ (նէռըն, նէռը), գաբուս (գաբուսա/ գաբուսիկ/ գաւիոս/ քաւիոս/ քաւիոս), քաջք (քաշք/ քաչկ)* հոմանիշները: Նշված գործուն հոմանիշներից բացի բարբառային բառապաշարի մաս են կազմում զանազան անգո էակներ նշող բառանունները՝ որպես հոմանիշ *սաւրանա* բառի (*այս, ալք, ք'էհզէր'ուդ, նըշանցք, համպերպք, սաղուկեցի, լէպ, բազմօտ* և այլն):

Բարբառային զգալի թվով գոտիներում գործածվում են ծածկալեզվային զուգաբանություններ. *մեզանն լավեր // քան զմեզ աղեկներ // քան զմեզ աղվեյր // մեզմեն աղեկներ // աղեկանք // մեզնն աղեկներ/ աղեկներ* և այլն:

Գլուխ 3. *Քրիստոնեական հիմնական խորհրդանիշների անվանումների բարբառային դրսևորումները:*

3.1. *Հավապ* և *հավաւոցյալ* բառերը բարբառներում տարածված են և ունեն լայն գործածություն, հանդես են գալիս մի շարք հնչատարբերակներով, ընդ որում ոչ այնքան տարածված հոմանիշային շարքերով: *Հավապ* բազմիմաստ բառի կրոնական գործառույթը, թերևս, ամբողջական դարձնելու նպատակով ավելացնում են *ք (>կ կամ գ)* վերջնահնչյունը՝ *հավօքք/ հէվոդք/հավօտք* և այլն:

Գրական *հավաւոյալ* ձևից բացի կան երկուսուկես տասնյակից ավելի տարբերակներ՝ *վըհաւոյալ/հավդընուլ/ հավդուշ/ էվդիլ/ ավդօլ* և այլն:

3.2 *Հիսուս Քրիստոս* և *քրիստոնյա*: Հոր և սուրբ հոգու համագոյակից աստծու միածին որդին՝ *Հիսուս Քրիստոս*, ըստ Սուրբ գրքի, կոչվում է *սաւրուծոյ որդի, որդի, կենդանի ասւրծո որդի, սաւրուծոյ միածին որդի*, որոնցից ոչ բոլորն են գործածվում բարբառներում: Բարբառային խոսքին բնորոշ են *հսսուս, Քրիստոս* և այլ հնչատարբերակներ: *Քրիստոնյա* ձևն ունեն զգալի թվով բարբառներ. գործածվում են հնչատարբերակներ՝ *քըրիստօնէ/ քրիստընյա* և այլն, երբեմն *ք>խ* անցմամբ՝ *խրիսթիյան/խրիստօնա* և այլն, գրական տարբերակի *ր* ձայնորդի անկմամբ՝ *քիստինէ/ քիսթինը*, նաև *քիսդինիգ* («հայ») և *քիստինուօլ* («հայերեն») իմաստներով:

Քրիստոնյա բառին հոմանիշ են *հիրիստիան* (Անկարայի թրքախոսներ), *կիստոն* (Տրապիզոն), *սաղիկա էրմենի // սաղիկա միլեթ* (Իսաբերդ, Դերսիմ), *մեսեհիյե* (Անտիոք), *նասրանի // հայ նասրանի, հոգեվախս*, նաև *զընքուզ/ կընկըվուզ* և այլն: Երբեմն տարբերում են *քրիստոնյա* և այլադավան ծնողների զավակներին.

գէգէսի «կեսկես» (Բեյլան), քարշը-քարշը (Ամասիա, Երզնկա), քարըշըկ (Կարին), կըրմանջի (Վասպուրական) և այլն:

3.3. Քրիստոնեական խորհրդանիշներ անվանող լեզվական միավորներ: Քրիստոնեական դավանանքի համոզմունքներով և նյութական պարագաներով պայմանավորված մի շարք խորհրդանիշներ անվանումները համալրում են կրոնակեղեցական բառապաշարը: Բարբառախոս հանրությունը բազմաթիվ բառերի, հնչյունական զուգաբանությունների, փոխաբերությունների, պատկերավոր արտահայտությունների, դարձվածքների, առածների և ասացվածքների միջոցով հստակորեն սահմանազատում, բնորոշում, իմաստավորում և հատկանշում է քրիստոնեական խորհրդանշանները:

Դրանք բաժանել ենք երկուսի՝ 1) *եյակետային* (կամ հիմնական) և 2) *ածանցյալ* (ծիսաարարողական պարագաներ, պաշտամունքային վայրեր, երկրպագության ձևեր և այլն): Առաջինն էլ, իր հերթին, բաժանել ենք երկուսի՝ ա) *նյութական* (կամ *առարկայական*) և բ) *բովանդակային* (այսինքն՝ *դավանաբանական-համոզմունքային*):

3.3.1. *Եյակետային (հիմնական) խորհրդանիշներ անվանող լեզվական միավորներ* ենք համարել քրիստոնեական եռամիասնության բաղադրիչներ հայր աստծուն, որդի աստծուն և սուրբ հոգի աստծուն մատնանշող լեզվական-տարածքային տարբերակները, որոնք, իրենց հերթին, երկու կարգի են՝ *նյութական (առարկայական)* և *բովանդակային (հասկացական)*:

Ա) *Նյութական (առարկայական)* խորհրդանիշներից են որդի աստծու՝ միաբնակներին հատուկ պատկերները, երկաբնակներին բնորոշ քանդակները, խաչերը (երբեմն նարոտով), Քրիստոսի մարմինն ու արյունը խորհրդանշող հաղորդության հացն ու գինին:

1) Քրիստոնեական վարդապետության *սուրբ հոգի* բաղադրիչի խորհրդանիշ աղավինն բարբառներում ունի իմաստային և հնչյունական հարյուրից անցնող բնիկ և փոխառյալ զուգաբանություններ (թվով՝ 120), ա) *աղավնի* գրական ձևի դիմաց (թվով՝ 10)՝ *աղըվնի/աղվըննա/ աղվընը//* և այլն, բ) *աղավնի + իկ // -ակ // -ուկ // -եկ* և այլ փոքրացուցիչ վերջածանցներով (թվով՝ 53). *աղնիկ/ղունիզ/էղնուզ/օղօնիզ* և այլն:

2) *Խաչ* բառը բնիկ է, բարդ և ածանցական ձևերով, բարբառային մի շարք տարբերակներով ընդարձակ տեղ է զբաղեցնում բարբառային խոսքում. տարածական և գործառական լայն ընդգրկում ունի գրական տարբերակը: *Խէչ* տարբերակն ունի «մոտ»՝ *իզօ խէչիս* («մոտս արի»), *խօջ իս* («ինձ մոտ»), *հերթօում ի խաչա* («ներա մոտ եմ գնում») և այլն: *Խօջ*-ը հանդես է գալիս որպես բազմիմաստ բառ՝ 1) «խաչ», 2) «սրբավայր», նաև *-իկ* և *-(յ)ուկ* ածանցներով՝ *խաչիկ* և *խաչուկ* «փոքր խաչ», որպես բառակապակցության բաղադրիչ մաս՝ *ցասման խաչ* և *օթյաց խաչ*: *Խաչ*-ով կազմվում են բազմաթիվ բարդություններ՝ *խաչվերաց, սըպիտէջ // սըփիտէջ, հազախաչ, խաչմայր* («աստվածահայտնության տոնի խաչավալայի ջուրը»), *խըջհանէք* («ջրօրհների ժամոց»), *խաչհամբուր* («նվիրատվություն») և այլն:

Խաչ բառը գործածվում է իր նախնական՝ աշխարհիկ իմաստով (Ղրիմ, Նոր Նախիջևան)։ *խաչք* («երդիկ»), *խաչկապ* («բանջարի խաչածն կապոց»), *խաչկու* («տանիք կապելու ձև») և այլն։ *խաչ* բառի իմաստային դաշտին են հարում *փուշփուշանք* («խաչի զարդարանք»), *ափիոն* («պատարագիչ քահանայի ձեռքի խաչ»), *փուսիալա՝* 1) «խաչ», 2) «սուրբ» և այլն։

Բարբառները հարուստ են *խաչ* բառով կազմված դարձվածքներով, *խաչը կոթով կու կու փա, խաչը ծոցեն կը հանե, նաև խաչը քաշե, խաչով խաչվել, մի խաչով թաղվի* և այլն։

3) *Սուրբ հաղորդություն* հասկացությունը բարբառներում նշվում է հնչատարբերակային մի շարք զուգաբանություններով։ Գրական *հաղորդություն* բառը բարբառներից ոչ մեկում գրանցված չէ. հնչյունական տարբերակներից են՝ *հաղորպություն// հավուրպուպեն* և այլն։ Մի շարք տարածքներում գործածվում է *հաղորթ//խովթորթ// խավորթ* կրճատ ձևը։ Հոմանիշներից են՝ *օրանք// ուրընք, մասն, ճաշագ, ոսկի կակա, բաժանք* և այլն։ Հաղորդվելու գործողությունը նշվում է *հաղորթվել, ճաշակվի, մասնըվի //մասնավորվի, օրենկվի, մասն առնել, օրենք առնել, հաղորդ առնել* հոմանիշներով։

Հաղորդության խորհրդի նյութն են հացը և գինին (առարկայական խորհրդանիշներ)։ Սուրբ նկանակը և նրա տեսակները գրական հայերենում նշվում են տարբեր անվանումներով՝ *նշխար, մաս, սուրբ հաղորդության հաց, բաղարջ, բոկեղ* և այլն։ Հայերենի տարածքային տարբերակներն ունեն բերված միավորներին հոմանիշ բազմաթիվ բառեր և հնչյունական տարբերակներ (թվով՝ 42)։ ա) *Նշխար*։ Բարբառների զգալի մասին բնորոշ են հնչատարբերակները. *նախշար// նըշխօթ// նըշղար// նիշխուր// նըշխօյ // նեշխօյ // նըրշանկ* և այլն։ Տարածագործառական ընդարձակ սահմաններ ունեն *նըշխարք* և *նըխշարք* տարբերակները։ Հոմանիշներից են *ջաշօզ (անջաշօզ՝ «հաղորդություն չստացած»), մանանա, մանանի խաց, պժին*։ *Նշխար* բառով են կազմված *նըշխարհացիզ* («նշխարածն հատապտուղ»), *նշխարանոց, նշխարախոց* («գրադարան») և այլ բարդություններ։ բ) *Մաս* բառն ունի սահմանափակ դրսևորում ժողովրդական խոսքում *մաս* և *նշխար* իմաստային շփոթություն հետևանքով։ Բարբառներում հանդիպում են *մասունք, ամաս(ն)ը* («առանց հաղորդություն ստանալու»), *մասպուփ, մասունք կըպրել // մասունք գըղրել* («այլայլվել») և այլ բառածևեր։

4) *Մյուռոն*-ը գրականից անցել է բարբառներին, ունի մի շարք հնչյունական տարբերակներ (թվով՝ 48)։ *մըյուռն//մառոն//միրոն// մէռան // մօռոն* և այլն։ Ոչ մի վայրում չի հանդիպում *միուռոն* (>մյուռոն) դասական տարբերակը, լայն տարածում ունի *մէռոն* տարբերակը։ Այս բառից են կերտված *մեռոնէփէք, մեռոնօրինէք, անմեռոն, նաև՝ մեռոնվի, մեռոնահան անել, մեռոնջրեն հանել* և այլն։

Բ) *Բովանդակային (հասկացական)* խորհրդանիշներից է մկրտության խորհուրդը՝ առնչակից բազմաթիվ հասկացությունների անվանումներով (*կնքավոր, ավազան, սանիկ, սանամայր* և այլն)։

1) *Երեխա բառի սան* հոմանիշը հայերենի տարածքային տարբերակներում ունի միայն քրիստոնեական բովանդակություն. այն բնորոշ է բարբառների գերակշիռ մասին, միայն բարբառային որոշ կղզյակներ ունեն *-իկ // -ուկ* փոքրացուցիչ վերջածանցներով ձևեր (*սանուզկ// սանիկ // սոնիզ* և այլն):

Մկրտություն գոյականի *կնունք* հոմանիշը բարբառների մի զգալի մասում ունի անհնչյունափոխ *կընունք* ձևը: Հնչյունական զուգաբանություններից են (թվով՝ 32)՝ *կընուք//կընօք//գընուք//գունուք* և այլն:

Կնիքելու, սուրբ մյուտոնով դրոշմելու արարողությունը բարբառախոսների կրոնական բառապաշարում դրսևորվում է հետևյալ հնչատարբերակներով (թվով՝ շուրջ մեկուկես տասնյակ). *կընընքիզհնքիկ// գընքուշ* և այլն: Մի քանի վայրերում գործածվող հոմանիշներից են՝ *օրէնքէլ* (կրավորականը՝ *օրէնքվէլ*), *հ°լըլէ, դ°րօշմել, օրթնիլ* և այլն:

Քանի որ մկրտության ծեսը կարևոր իրադարձություն է հայ քրիստոնյայի կյանքում, ուստի դրան առնչվող բառերն ունեն բարբառային լայն տարածում, ըստ որում բառակազմական և իմաստային տարբերություններով. դրանք են՝ *սանահայր, կնքահայր, կնքաբաբ// -պապ, սանաբաբ, կնքավոր, պել, սանամայր, կնքամայր, կնքավոր մայր, պելակին*: 1) *Սանահայր* բառն ունի բառային և հնչյունական բազմաթիվ զուգաբանություններ՝ նույնարմատ և տարարմատ հոմանշային շարքերով. *սանէր/սանհէր/ սանիէր* և այլն, երբեմն՝ *սանայէր* (փխբ. «պարզամիտ»), *սանաբօբ* («կնքվող երեխայի հայր») և այլն: Բառի ամենատարածված հոմանիշներն են *կնքահայր* (կնիք+ա+հայր) և *կնքավոր* (կնիք+ավոր):

2) *Կնքահայր* գրական տարբերակն ունեն մեկ-երկու բարբառ, հիմնականում հնչատարբերակային են (թվով՝ 23)՝ *կընգար/գընգաար// գընք°ր //գընկ°ր*, այլև *ճ* խոլ հնչյունի հավելումով՝ *գընկ°րճ, խաչ բաղադրիչով՝ խաչգընկահար*: Բառին կրոնանկեղեցական իմաստով հոմանիշ են՝ *°խպըրանուն, ախպըրքէր* («հարսանիքի քավոր»), այլև *հորեղբայր* բառի ամփոփումից՝ *բէբ°ր/պէվիր*:

3) *Կնքաբաբ // պապ*: *Կնիք* բառին ավելացել է *բաբ // պապ* բաղադրիչը, տարբերակներից են (թվով՝ 16)՝ *գընքաբօբ// հինքաբաբ//հընքաբաբ// իքճաբաբ// ընքաբաբ// ք°բաբ* և այլն:

4) *Սան+ա+բաբ*: Ունենք եզակի օրինակ Ադանայի խոսվածքում՝ «սանահայր» իմաստով. պարզվում է, որ այն բացառապես բնորոշ է փոքրասիական տարածքի բարբառներին:

5) *Կնքավոր* բառը հանդիպում է տարբեր հնչմամբ՝ *կունքօր//ընք°վոր // ինք°վոր //քավիր//չավոր*, այլև *քըօր*՝ փի սղումով: Հաճախ *քավոր* բառիմաստն արտահայտվում է բառակապակցությամբ. *ք°վօր աղա, քավօր բաբ, կանաչ մեռօնի քավոր, մէռնքավիր, փըսակի քավոր, խաչքավիրն, խաչապէլ* և այլն:

6) *Պել* բառի հնչատարբերակներից են՝ *պէլէ// պէլի //բէլի* և այլն, կան նաև փոխառյալ ձևեր՝ *շըբէին* («հարսանիքի կնքահայր»), *խաշլու, սըէ՛սա, սաղղըջ* («պսակի քավոր»), *վաֆթիզ դաղ* և այլն:

7) *Սանամայր* բառը բարբառներում հայտնի է մի քանի իմաստներով.
1) «մկրտվող երեխայի հոգեմայր» (թվով 17)՝ *սընամայր // սանամար/սօսեմար* և այլն,
2) «կնքվող երեխայի մայր» (թվով 3)՝ *սանամօր// սանամէր*: Հանդիպում են նաև
Սանամօր յէրպ // Սանամոր քաշ («Հարդագողի ճանապարհ»):

8) *Կնիք+ա+մայր // կին*: *Մայր* բաղադրիչով (թվով՝ 20)՝ *ինքամար // քամամ*
//ինքամար և այլն: *Կին* բաղադրիչով կազմությունները քիչ են (*գընքագին // գըն-*
կագին և այլն):

9) *Կնիք+ավոր+(ա)մայր//կին(իկ)*: Ունենք զգալի թվով տարբերակներ՝
սերված *մայր* կամ *կին* երկրորդական բաղադրիչներով. *մայր* բաղադրիչով (թվով՝ 6)՝
քավօրմէր// ք՞վօրմէր և այլն: Երբեմն առանձին բառով նշվում է նաև կնքահոր
մայրը՝ *քավորմամ/ք՞մամ* և այլն. *կին* բաղադրիչով (թվով՝ 32)՝ *քըվորագին //քա-*
վէրկինիծ //քըվորգին//չավորկին և այլն: *Կնքամայր* բառի հոմանիշ են *մէում // մծմ*
հնչատարբերակները:

10) *Պել+ա+կին(իկ)//մայր*: Ունենք (թվով՝ 12)՝ *պըլըկընէգ// պըլէկէն// բիլէ-*
կէն, պիլ՞մըր և այլն:

3.3.2. Ածանցյալ խորհրդանիշներ նշող բառածներ:

Ա) *Աղոթասացություն*: Գրական հայերենին բնորոշ *աղօթք* ձևը գրանց-
ված է մեծ թվով բարբառներում: *Աղօթք* բառի միջձայնավորային *ղ* ձայնեղ
բաղաձայնը հայերենի բոլոր տարածքային տարբերակներում պահպանում է իր
կայունությունը և չի հնչյունափոխվում: Կցորդության հիմունքով իմաստափոխության,
գործառական (ֆունկցիոնալ) զուգորդության արդյունքում որպես *աղոթք* բառի
հոմանիշ գործածվում են *ծունդոր, չոք, օրթն՞ք, պուղադանք, բահրանիչ, խաչ-*
մէրգինք և այլն:

Նկատված է, որ Ս. Գրքում պարզ բայի փոխարեն առաջնությունը տրվել է
բաղադրյալ ձևերին (*աղօթս առնել, յաղօթս կայ, աղօթս մատուցանել* և այլն):
Թերևս այս օրինակով բարբառներում ունենք *աղօրկ էնել// աղօրկ արի//աղօթք*
ընել և այլն: *Աղոթել* բայի բարբառային հոմանիշներից են *ծունդորը ընուշ, գ՛լլօխ*
դ՛ընէլ, սաղմոս կարդայ, սաղմոս քաղել, տեր ողորմյա ասել, էղէցի կէնալ//գայնէլ և
այլն: *Աղոթք* և *աղոթել* իմաստային ոլորտում են *մասաննորի* (<մասամբ նորին
գրաբարյան ձևից («ժխոր»)), *մասաննորի անել// շինել // սարքել* («աղմկել»):

Բ) *Տիրոջ վերագրում և աղոթքի հաստատում*: Ալելուիա օրինաբանության
տարբերակներից են՝ *ալէ՛լու// ալէլույա// օ՛լ՞ւօ* և այլն: Հ. Աճառյանը բարբառային
նորմաստ տարբերակներ է համարում *ալէլուք* («ծննդյան տոնին ավետիս ասելը»),
ալելու («տոնի առթիվ նվեր հավաքելու աման»), նաև *ալելուք գովել, ավելոյիս երգել*
հարադիր բայերը¹: Աղոթքը հաստատվում է խաչակնքումով: *խաչակնքել* գրական
ձևը բնորոշ է քիչ թվով բարբառների: Տարբերակային ձևերից են՝ *խըչակընքել//*
խաճագընկել// խաճագընկիլ և այլն: Ունենք *խաչագընքիէլ*՝ «հոգևորականի ձեռամբ
կնքվել» իմաստով, այլև *խաչակնքելի* փոխարեն *խաչավ կընքվըիլ* հարադիր բայը:

1. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, էջ 93:

Մեծ թվով բարբառներում գործածվում են *խաչակնքել* բայի նույնարմատ հոմանիշներ. *խաչ* հիմնական բաղադրիչի հետ հաճախ հարադրվում են *հանել, անել, քաշել* բայերը (*խըչըհանըել// խըչհանել*, հարադրավոր բայեր՝ *խըաճ հըանել// խաչ հոժուշ* (նաև *խաչհոժուշ*), *խըչըհան անել// խաճ ընուշ, խաչ քաշուշ* և այլն): Շատ քիչ թվով բարբառախոս կղզյակներում *խաչ հանել*-ին հոմանիշ են *խաչել, աղօթք էնել, կընունք անել, անընհօր ասել* և այլն:

Գլուխ 4. *Կրոնականեղեցական տոների անվանումների բարբառային դրսևորումները:*

4.1. *Տոնական օրերի ընկալումը և տարբերակումը:* Տոնական օրեր անվանող բարբառային կազմություններից են՝ *նըշուվ օր* (Խիան), *հրաշայի օր* (Ադանա), *մախս օխս* (Երզնկա), *կըճափ օր, կըթփուք, դ'էրի* (կարծում ենք՝ *տըր>դէր→դէրի*):

4.2. *Ամանոր և աստվածահայտնություն:* Բնիկ հայերեն ամ արմատից կազմված ընդհանուրհայերենյան *ամանոր* բառը գրանցված է միայն Սեբաստիայի Խառնավուլ բնակավայրի խոսվածքում: Սակավ թվով տարածքների բնորոշ է *տարեմուտ* բառի վերջին *տ* խույլ պայթականի ձայնեղացմամբ տարբերակը՝ *տարեմուտ*. բուն իմաստով նշանակում է «նոր տարվա նախորդ օրը»:

ա) *Նավասարդ* ամսանունը իրանական փոխառություն է, որ բառիմաստի նեղացմամբ ներկայումս հասկացվում է միայն հեթանոսական կրոնի ըմբռնումով, որի տարբերակներից են՝ *նավասօրդ//նըվա՛սարթ//նավըսարթ* և այլն, նաև *նավասարդվա օր* (Նորքի խոսվածք)՝ որպես հոմանիշ *հին նոր տարի* բառակապակցության:

բ) *Կաղանդ* բառը փոխառություն է հունարենից՝ «ամանոր» իմաստով, առավելապես բնորոշ է արևմտահայերենին (թվով՝ 36). *կախանդ//կաղինթ// կաղընտր// գաղաթ // գաղա// գաղունդ* և այլն: Մի շարք տարածքներում այն գործածվում է *-էս// -աս// -օս* ածանցներով. *կալընդօս* (Շապին Գարահիսար), *գաղընդէտ* (Հաջըն), *գ՛աղընդօս* (Բեյլան), *կ՛ըլընդօզ* (Սասունի Մըշկեդ), *կախընդօզ* (Մուշ) և այլն:

Գավաշի Հարպերտ գյուղի խոսվածքում հունվարի 5-ը կոչում են *կաղանդնօր*: Կարծում ենք՝ ա) *կաղանդնօր* բարդությունը կազմված է *կալանդոս // կաղանդոս+ն* աճական («նոր տարի» հասկացության համաբանությամբ) → *կաղանդնոս*, որն էլ «նոր» հասկացության իմաստի ազդեցությամբ վերածվել է *կաղանդնօր*-ի, բ) չի բացառվում *նոր տարի* բառակապակցության համաբանությամբ ստեղծված *կաղանդ + նոր* կառույցը:

գ) *Տոնի քրիստոնեական բառանվանումները:* Բարբառներից մի քանիսում տարեմուտը կոչում են *տօն* կամ *տօնություն*, որն ունի քրիստոնեական բովանդակություն՝ կապված Քրիստոսի ծննդյան տոնի հետ: Ջրօրհների՝ Քրիստոսի մկրտության ծիսական արարողության անվանումով է կոչվում տարեմուտը. *ջըրօրհներ* բառի հնչյունական տարբերակներից են՝ *ջ՛ըրօխնեկ// ճըրօրհնանք//ճըրօխնաք// ճըրօշընեճ՝* և այլն, որոնք արտահայտում են միայն Քրիստոսի ծննդյան տոնի բովանդակություն: Որոշ տարածքներում «ամանոր» իմաստն ունեն *գապրիկ // գաղիգ*,

պըստի // բըզդիգ գաղիգ ձևերը: Այդպես նշված են նաև՝ *գալօնդար* և *կաղանդ*՝ «Աստվածահայտնության տոն» իմաստով: Ընդհանուր առմամբ հայերենի գրեթե բոլոր տարածքային տարբերակներին բնորոշ են *փոքր գափիկ* և *մեծ գափիկ* արտահայտությունները՝ որպես Աստվածահայտնության և Հարության տոների համարժեքներ:

դ) *Նոր տարի*: Բարբառների գերակշիռ մասում *նոր տարի*-ն գրանցված է կամ՝ գրական ձևով, կամ բարբառային հնչյունական տարբերակներով (թվով՝ 29) ընօր տարեկան/նոր դարը/նեյ դարի/նոր դաի/նոր դարա, նաև *թաժա տարի* և այլն: Գրանցված հազվադեպ տարբերակներից են՝ *լօլէ, դօլմօյի, տընօխնէկ, դէյէն դէգ*. նկատելի է տոնանունների շփոթություն: Սեբաստիայի Դենդիլ բնակավայրում որպես *հունվար* ամսանվան համարժեք գործածվում է *զահմարի* օտարաբանությունը:

4.3. *Տյառնընդատաջ* և *տէրընդայս* գրաբարյան կազմությունները, անցնելով բարբառային բառապաշարին, ենթարկվել են այս կամ այն տարածքին բնորոշ հնչյունական փոփոխության:

Տյառնընդատաջ (տօռօնջ-տօռօնջ// տառինջ-տառինջ// դառդառանջ// տէրինտառաջ// տանտառէջ// տէնդատաջ// դառանջ և այլն:

Տէրն ընդ այս (տէրընդաս// դըրընդէզ// տըրընդազ//դէրընդաս// դարնդաս և այլն:

Համշենի Ունիե և Բալլուդ գյուղերում Քրիստոսի այլակերպության տոնը, որ հայտնի է *վարդավառ* անունով, *վառտէվառ* հնչյունական տարբերակից բացի նշվում է նաև *տէրընդաս* հոմանիշով: Ակնհայտ է, որ *վառտէվառ* օրինակում տեղի է ունեցել Քրիստոսի հրաշակերպության, իսկ *դէյէն դէգ*՝ ծննդյան և քառասնօրյայում Տաճարին նվիրելու տոների անվանումների շփոթություն, որը բավականին տարածված է բարբառախոսների շրջանում:

Փոքրասիական Բուրդուր բնակավայրի խոսվածքում տոնն ունի *տըրընջ-թէրէնջ // թըրընջառէնջ* անվանումը է. բարդության շ խոլ շփականը հուշում է *այս* («Տէր ընդ այս») ցուցական դերանվան առկայության մասին, սակայն առաջին և վերջին բաղադրիչները հիշեցնում են *տյառնընդատաջ* կազմությունը: Ըստ այդմ, կարող ենք ասել, որ տեղի է ունեցել *տյառնընդատաջ* և *տերնընդայս* ձևերի բաղարկություն, որ բարբառներում հազվադեպ երևույթ չէ: Չնայած գրաբարում, միջին հայերենում և աշխարհաբարում որպես գրական տարբերակ առկա է *տյառնընդատաջ*-ը, սակայն բարբառներում գերակշռում են *տերն ընդ այս* կազմության հնչատարբերակները:

ԼՂՀ Մարտակերտի Առաջաձոր գյուղի խոսվածքում *դընդօռաջ* բառի առաջնային՝ *տյառնընդատաջ* կրոնական իմաստը մթազնել է՝ փոխարինվելով «բարկ կրակ» աշխարհիկ իմաստով, որից էլ կազմվել է *դընդօռաջ սարքել // անել* («մեծ, բարկ կրակ վառել») հարադիր բայը:

Վայոց Ձորի միջբարբառի խոսվածքներով հաղորդակցվողների բառապաշարում կա «Սիմոն–Ծիրանի ըլէս»² բարենաղթանքը, որում *ծերունի* ածականը շփոթության արդյունքում դարձել է *ծիրանի*: Չի բացառվում նաև, որ Քրիստոս մանկանը ընդառաջ եկած Սիմոն ծերունին մեծարվում է որպես *ծիրանավոր* («թագավոր, կայսր»):

4.4. *Պահք և պահեցողություն*: Բարբառներից ոչ մեկում չենք հանդիպում *պահք* գրական ձևին՝ բացի Ղարադաղի խոսվածքի մի տարբերակից ը որոշյալ հոդով՝ *պահքը*: Հնչյունական տարբերակներից են՝ *պօք* // *բըք* // *բոկ պահս* // *պայ* // *բաղ* և այլն. սրանցից առանձնանում է Վանի բարբառի *պաքս* ձևը: Բարբառներում լայն տարածում ունեն *պաս* ձևի հնչյունական տարբերակները: *Մեծ պաս*-ը հիմնականում հիշատակվում է *պաս* բառանվանումով, և ոչ բոլոր տարածքներում է, որ շեշտվում կամ նկատի է առնվում *մեծ* բաղադրիչը, կան այլ բաղադրիչով տարբերակներ՝ *ջոջ պաս*, *ավագ պահս* և այլն: Երբեմն «պահք» հասկացության արտահայտման համար գործածվում են *պահվածք* և *պահուստ* կազմությունների հնչյունական տարբերակները. *պայվասկ* // *պայուստ* // *բ՞յուսկ* // *բահուստ* և այլն: Պաս բառին հոմանիշ է *ծու*-ը, չնայած «պաս» և «ծոմ» հասկացություններն ունեն ծավալային (իմաստային) զգալի տարբերություններ: Երբեմն այդ երկուսը տարբերակված չեն, և երկուսն էլ կոչվում են *պ՞խս*: Կան «պաս» հասկացության այլ անվանումներ՝ *հնգօրյա վարդավառի պահք*, *եղյակ պահք*, *եղիական շաբաթապահք*, *եղիական անձրև*, *հոգուպահք* և այլն: Ըստ այդմ սուրբ Եղիայի տոնը բնորոշում են տարբեր անվանումներով. *թրթուրի պահք*, *կենտրապաս*, *շաբաթապահք*, *նրվասարդի պօք*, այլև՝ *խեղդ աշուն*, *հորթաթողի* կամ *հիսնակաց պահք* և այլն: Բառապաշարի այս շերտն ավելի հարուստ և բազմազան է, քան գրական հայերենում:

4.5. *Ավագ շաբաթ*: Քրիստոսի երկրային կյանքի վերջին շաբաթը, որը հաջորդում է Մեծ պահքին, և նախորդում աստվածորդու հարությանը, կոչվում է *ավագ շաբաթ*: «Աւագ շաբաթի եօթ օրն էլ իրանց անուններն ունին... Սեւ երկուշաբթի, Շիլ երեքշաբթի, Չիք չորեքշաբթի, Աւագ հինգշաբթի, Յուդի ուրբաթ, Չատկի շաբաթ, Ախար կիրակի»³: Այս շաբաթվա բոլոր օրերն էլ ունեն իրենց խորհուրդը՝ համապատասխան բարբառային բառաշերտով (*խավար*, *սև ուրբաթ*, *լօցք*, *սգում էրբ՞թ*, *էգլաս*, *ւթի* // *օթի ուրբաթ* և այլն):

4.5.1. *Ծաղկազարդ*: Բուն տոնի անունը հիմնականում կերտվում է կան *ծաղիկ*, կան *ծառ* առաջնային բաղադրիչներից, որոնց ավելանում է *զարդ* գոյականը կամ *զարդար* բայական հիմքը: *Ծաղիկ* առաջնային բաղադրիչով կազմություններից են՝ *ծաղգազարթ* // *ծաղէզարդ* // *ծըղկազարթ* և այլն: Համշենի տարածքում *զարդ* գոյականի փոխարեն գործառվում է *խաղ* երկրորդային բաղադրիչը՝ *ծաղգախաղ*: Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ երբեմն կոչում են *ծաղգազարթի կիրագի*, *ճաղգէզարդի դ՛օն*: Բարբառախոս մի շարք վայրերում այն

² Ա. Վարդանյան, Վայոց Ձորի միջբարբառը, Երևան, 2004, էջ 155:

³ Էմիլեան ազգագրական ժողովածու, հ. Ա, էջ 269:

հիշատակվում է իբրև *ծաղգի փոն*// *ծախկի փոն*, նաև *ծաղկափոն* և այլն: Երբեմն կիրառվում է օտար բառ-բաղադրիչներով կազմված հոմանիշներ՝ *ջանգլուր*// *ջանգձուր* և այլն, որտեղ ակնհայտ է Ծաղկազարդի շփոթությունը Համբարձման տոնի հետ: *Տառ* առաջնային բաղադրիչով կազմություններ՝ *ձառզարպուր*// *ձառզարթըր*// *զայզայարար* // *զըրզարթար*//*ծըզառթար*// *ծըզարթար* // *զայզայրըրիզ*// *ձառզարպըրիզ*, //*ջօրջարթօր*// *ձօռձառթօր* և այլն: Լոռու խոսվածքի Ստեփանավանի Կուրթան գյուղի ենթախոսվածքի *տըզառթար* հնչատարբերակը, ենթադրում ենք, առաջացել է *տըրընդեզ* բառի հետ բաղարկվելու արդյունքում:

Բավականին հարուստ է Ծաղկազարդի տոնն անվանող հոմանշային շարքը՝ *ուռոռհնօց*// *ուռօխնիք*, *խերօխնիք*, տոնանունների շփոթության հետևանքով՝ *վըթեվուր*, *վիճակ* և այլն: Մեծ թիվ են կազմում ծաղկազարդի տոնին առնչվող հասկացությունների անվանումները՝ *կարկաչա*, *ճօկօնագ*, նաև բայական կազմություններ՝ *ճօկօնակ ասել*, *խաղ ասել*, *բար խաղալ*, *ճըռռան ածել* և այլն: Նկատում ենք, որ *ծաղկազարդ* և *ձառզարդար* կանոնական ձևերից երկրորդի տարածքային տարբերակները քանակով և գործածությամբ ավելին են:

4.5.2. *Հարություն* գրական ձևն ունեն սահմանափակ թվով տարածքային տարբերակներ: Հիմնականում տարածված է *զարիկ* բառը՝ համապատասխան տարածքային տարբերակներով: Բառը որոշ տարածքներում բազմիմաստ է (օրինակ, Մուշի բարբառի Բուլանովսի խոսվածքում նշանակում է՝ 1. «գրի», 2. «ոչ պահք, ուտիս օր», 3. «տոնական օր, երբ պահքը լուծվում է մտեղեն և յուղալի կերակուրներով»): Բառաբարդություններից են՝ *զարկություն*, *զըրկըջբաթ*, *զըրկըռէխ*, *զըռազաղիկ* և այլն:

Հարության տոնին առնչվող ձևահմաստային միավորները քանակով այնքան էլ շատ չեն՝ ի համեմատություն, օրինակ, Ծաղկազարդի տոնի: Կարծում ենք՝ դա պայմանավորված է Ծաղկազարդի տոնի հնագույն լինելով:

4.6. *Վարդավառ* գրական ձևը բարբառներում չի հանդիպում: Հիմնականում բաղաձայնական և ձայնավորական հնարավոր բոլոր հնչյունափոխությունների ենթարկված փոփոխակներ են (*վիրթիվիր*//*վաշթեվօր*// *վարթօր* // *վաշտեվիր*// *վաշտիվօր*// *վարտիվոտ*// *վառթըվէր*// *վարտըվուր* և այլն): Սասունի բարբառում գործածվում է *-իզ* (>*իկ*) փաղաքշականով *վարտեվօրիզ* ածանցավոր ձևը: Եվդոկիայի բարբառում տոնի անվանումը նշվում է *վարդավառություն* հավաքական գոյականով: Որոշ տարածքների բնորոշ են այս կամ այն իմաստի փոփոխությամբ պայմանավորված հոմանիշներ՝ *տէրք*, *շաղըրվան*, *անձրև-վաթ*, *պալլում* // *պարլում* // *պարլամօն*, *գյուլ գյունա*, նաև *ծաղկազարթ* և այլն:

Գլուխ 5. Աստվածապաշտության վայրի և ծիսական պարագաների բարբառային անվանումները:

5.1. *Ընդհանուր աստվածապաշտության ազդարար զանգ հասկացությունը* բարբառների գերակշիռ մասում գործածական է գրական հայերենին բնորոշ *զանգ* ձևով: Մի շարք բարբառներում գործածվում է *կոչնակ* բառը, որն ավելի բնորոշ է արևմտյան բարբառախմբին՝ հնչյունական տարբերակներով (*գօշնօզ*// *գուշնօզ* //

գօշնագ//կուշնօգ և այլն): Քիչ թվով բնակայրերում հանդիպում ենք հոմանիշների. *ճամփուռ, քամբանա // քամփանա, գիլ* և այլն:

5.2. *Ծիսապաշտամունքային վայրերի անվանումների տարածագործա-
նական քննություն:* Աստվածապաշտության վայր նշող իմաստային բառախմբի մաս
են կազմում *եկեղեցի* և *տաճար* բառերը, նաև հարակից մասերի անվանումները
(*գավիթ, ալյան, դաս, բեմ, սեղան, վարագույր, խաչկալ, ընծայարան* կամ
խորհրդանոց, սարկավագապուն կամ *խորան*), նաև եկեղեցու հիմնարկերը և օժուրը
նշող բառերը:

Եկեղեցի բառն ունի մեկ հարյուրյակի հասնող հնչյունական տարբերակներ՝
*եղեգեհի // յղեցի// յեղեցի// յեղեց/ յեղծե// յղեխծե // յղեցե// յղըեցի// ագեղեցի//
կիղեցե// գիղիցա// գեխցի* և այլն: Հատկանշական է *ժամ* բառի գործածությունը
(*ժում// իժամ // իժամ* և այլն), երբեմն *տուն* բաղադրիչի հետ՝ *ժամպուն// ժամդուն //
ժամգուն* («աղոթատեղի»):

Բարբառային-խոսվածքային կղզյակներում աստվածապաշտության վայրը
կոչվում է *խաճ* (իմաստափոխություն՝ մասի և ամբողջի կամ խորհրդանիշի և
խորհրդանշվողի հարաբերակցությամբ): *խաչ* («եկեղեցի») բաղադրիչով է կազմված
Հանձենի բարբառի *խաչտուն // խաչտուն* բառը՝ 1. «եկեղեցի», 2. «եկեղեցու դուռ»:
Վանք բառը իմաստի նեղացմամբ որոշ տարածքներում հոմանիշ է *եկեղեցի*
բառին:

Բարբառներից մեկ-երկուսում հանդիպում են *աստրծու խորան, աստրծու
տաճար, աստրծու դուռ*, նաև *սորփ* (իմաստափոխության առարկայի և հատկանիշի
հիմունքով) հոմանիշները: *Եկեղեցի* և *ժամ* բառերին երբեմն փոխարինում է *սրբա-
տեղ* բարդ բառը՝ «վանական համալիր, եկեղեցի և մատուռ» իմաստների մեկտե-
ղումով:

5.3. *Ծիսապաշտամունքային պարագա նշող բարբառային բառերի
նկարագիրը:* Քանի որ ծեսը մեր եկեղեցի մուտք է գործել հույն եկեղեցու միջոցով,
այդ իսկ պատճառով ծիսական բառերի մեծ մասն ավանդված է հունարենից: Ծես
կամ ծեսի պարագաներ, ծիսական հանդերձանք անվանող բառերի մի մասն է
կենսունակ ժամանակակից գրական հայերենում, և սակավ թվով բառեր՝ որպես
գրական փոխառություններ, անցել են հայերենի տարածքային տարբերակներին:

5.3.1. *Աստվածաշունչ մատյան և սուրբ գրքեր:* Քանի որ եկեղեցական գրքե-
րը, ի տարբերություն աշխարհիկի, գործածությունից առաջ օրհնվում են եպիսկոպոսի
կողմից և դառնում են սուրբ և համբուրելի, ըստ այդմ *համբուրել, համբուրելի* բառերն
ստանում են ծիսական բովանդակություն, այդպես նաև բարբառներում: Աստվա-
ծաշունչ մատյանի *Սուրբ Գիրք, Սրբագիրք* (հնց.), *Սրբագրյա գիրք, Սրբագ-
նաբանություն, Սրբազան գիրք, Սրբազան մատյան, Սուրբ տառ(ք)* և այլ անվա-
նումները բնորոշ չեն բարբառային բառապաշարին. հիմնականում գործածվում է
ավետարան գրական փոխառությունը՝ հնչափոփոխակներով (թվով՝ 24)՝ *ավիդրան
// էվէպրան// ավիդրան// ավիդրոն// ավիդայոն// ավէդարոն* և այլն: Հաճախ
Ավետարան բառին նախորդում է որևէ մակդիր՝ *Թաքավորի, Յուդաբերի, Հարու-*

թյան, Կարմիր, Կենդանանից, Մեռելահարույց և այլն: Բարբառներից մեկ-երկուսում, հունարենի օրինակով, *ավերարանն* անվանում են պարզապես *գիրք* // *կիրք*, նաև *Գրդագարան*, որին հոմանիշ է *Ժամագիրք* անվանումը:

5.3.2. *Շարական, գանձ*: Հայտնի է, որ շարականի յուրաքանչյուր ելևէջ բնորոշվում է ձայնային տարբերակվածությամբ, որը եկեղեցական գրականության մեջ արտահայտվում է երկու բաղաձայնի համառոտումով, որոնց բարբառային անվանումներից են՝ *յերկաթ*, *կիրականըփի*, *մամկոն*, *վրոզըփարեք*, *քընքըշակ*, *ջորէքաշ*, *փանուպըրակ*, *փուկափ*, *հովանիսուկ*, *վարսեղըն* և այլն⁴:

5.3.3. *Լույսի ծիսական բաղադրիչների բացատրությունը*: Աստվածաշունչ մատյանում, հայրաբանական գրականության մեջ բազմաթիվ են *աստված* ↔ *լույս*, *առաքյալ* ↔ *լույս*, *քրիստոնեություն* ↔ *լույս* հարաբերակցության վկայությունները: *Լույս* ↔ *աստված* խորհրդանիշներից են նաև մումը, կերոնը, կանթեղը, ճրագը, աշտանակը, ջահը, որոնք, աղոթավայրերի լուսավորությունն ապահովելուց բացի, հատկանշվում են ծիսական լույսի գործառույթով: ա) *Մում*. իբրև գրական փոխառություն՝ այն հնչափոփոխակներով անցել է լեզվի տարածքային տարբերակներին: Հանդիպում են մեկ-երկու հոմանշային տարբերակներ՝ *գերոն*, *ֆընփի*, *շօժ*, այլև *գընքօմում*, *ըսպարմաճեփ*, *մեղրէ մոմ* և այլն: բ) Ծիսական-արարողական անոթների մեջ առավելապես առանձնանում է բուրվառը: Բարբառներում լայն տարածում ունեն գրական արևելահայերենին բնորոշ *բուրվառ*, այլև *ր > ռ* դրափոխությամբ՝ *բուռվառ* ձևերը: Հնչյունական տարբերակներից են՝ *բ'ուրֆար*/ *բ'ուրվառ* (կարծում ենք՝ <*բոյր արկանել* բայածևից)/ *բ'ըրվառ*/ *պուվառ*/ *փուռվառ*/ *փոռվառ*/ *փիլվառ* և այլն: Կան մի շարք օրինակներ, որոնք հնչյունական շեղումներ են այս կամ այն բարբառին բնորոշ համակարգից: *Բուրվառ* բառի հոմանիշներից են՝ *խընգաձըխիգ* (Մալաթիա), *խունգանոց* (Շամախի), *փարդուք* (Եվդոկիա), *թաս* (Ախալքալակ) և այլն:

Գրական հայերենում, նաև որոշ բարբառներում գործածվում են *բուրվառ անել*, *բուրվառ գցել* հարադրությունները՝ «խնկարկել» իմաստով (հմմտ. գրաբարում՝ *խունկ արկանել*): Ընդհանրապես ոչ միայն գրականում, այլև բարբառներում *բուրվառ* բառով բաղադրված կազմությունները սակավաթիվ են:

գ) *խունկ* բառը հիմնականում հանդես է գալիս հնչյունական տարբերակներով (*խոնգ* // *խունգ* // *խաունգ* և այլն), գործածվում է հայերենի գրեթե բոլոր բարբառներում, ունի բարբառային սակավաթիվ հոմանիշներ (*կընդրուկ* // *կընփրուկ*, *լիբանոս*, *զմուռոս*, *կամախի*, *պուխուր*, *պեհար* և այլն), որոնք առավելապես բնորոշ են հայերենի արևմտյան տարածքի տարբերակներին: Այն գործածվում է նաև *մոմ* բառի հետ՝ *խունկ ու մոմ* / *խընկուվ-մոմով*:

⁴ Տե՛ս Ա. *վարդապետ Մկրտչյան*, Նախաշավիղ քրիստոնեական կրթության, Ս. Էջմիածին, 1990, էջ 92-93: Տե՛ս նաև՝ Ա. *Վրդ. Ամադունի*, Հայոց բառ ու բան (նշված բոլոր օրինակներն այս բառարանում գլխաբառեր են):

5.4. Հոգևոր հագուստի և նվիրական առարկաների բարբառային անվանումները բավականին քիչ են և ունեն սակավ գործածություն: Դրանցից համեմատաբար տարածված են մի քանիսը:

5.4.1. Հոգևորականի արտահագուստի *սքեմ* անվանումը որևէ բարբառում չի հանդիպում: Քանի որ բարբառախոսները չեն տարբերակում հոգևոր սպասավորների *սքեմ*, *փիղոն*, *շուրջառ* հագուստների ձևային և նվիրապետական առանձնահատկությունները, ուստի դրանք դիտարկում են որպես նույնանիշներ և հիմնականում փոխարինում *կապա*, *արա*, *փարաջա* բառերով: Նիկոմեդիայի բարբառում տեղի է ունեցել բառիմաստի փոփոխություն, և *գարա* նշանակում է «հարսի տոնական հագուստ», իսկ Ղարաբաղի բարբառում՝ «գորգ»: Բազմաթիվ վայրերում և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ իմաստով գործածվում են *կապա* ելակետային ձևից բավականին հեռացած *ղարա*, *ջուր*^o և այլ ձևեր: Հաղորդի խոսվածքում գրանցված է *կէպկա* հարանունը: *Շուրջառ* բառն ունի լայն գործածություն. գրական հայերենի ձևով կա մեկ-երկու բարբառում, իսկ մյուսներում առկա են հնչյունափոխական տարբերակներ (թվով՝ 49). *շըրճալ*// *շուրշալ*// *սուրջառ* // *սըրջար* // *շուռշալ*// *Ֆըռշալ* և այլն: Ժողովրդական ստուգաբանության արդյունքում Ղարաբաղի և Վանի բարբառներում ունենք *շուրկ*^o և *շուրկ*^o հարանունը: Հաջընի բարբառում *շույճոյ* տարբերակը բազմիմաստ է, նշանակում է նաև «ձայնի ներդաշնակություն»:

5.4.2. *Վեղարը* որոշ տարածքներում միայն հնչյունական տարբերակներով է՝ *վեղոյ վիղար*// *վիղուր* և այլն: Փոքր Ասիայի թրքախոս հայերի, հույների, ասորիների և թուրքերի խոսքում ևս հանդիպում է *վեղար* գրական հնչատարբերակը:

Քիչ է հանդիպում բառի *կնգուղ* հոմանիշը (*կընգող*// *քընգուղ*// *գընգող* և այլն): Զեյթունի բարբառի *գոնգուղ*, *բուռնուղ* հոմանիշները բազմիմաստ են և «վեղար» նշելուց բացի ունեն «կնքվող երեխայի վրա գցվող շոր կամ սավան» իմաստը: Բուլանուխի խոսվածքում և Վանի բարբառում բառին հոմանիշ է *պոպոզ*-ը՝ 1. «վարդապետի կնգուղ», 2. «գյուղական տների գմբեթաձև տանիք», 3. «հոգևորականի կամ զինվորականի սրածայր գլխարկ» իմաստներով: Այսպես նաև Վանի բարբառի *կուլոփկ* հոմանիշը՝ «վարդապետի կամ քահանայի գլխանոց»:

5.4.3. *Շապիկ* (պահլ. šapik) նախնական իմաստի հիման վրա էլ առաջացել է ժամանակակից կրոնանկեղեցական բովանդակությունը (*շաբըթ*// *շեբիգ* // *շեբի* և այլն): Բջնիի խոսվածքում *ժամաշապիկ* փոխաբերաբար նշանակում է «երկերեսանի, թուլամորթ»:

5.4.4. *Սաղավարտ* գրական փոխառությունը չունի լայն գործածություն, ուստի հանդիպում են ոչ մեծ թվով հնչատարբերակներ: Գանձակի խոսվածքն ունի *դրոշտի* տարբերակը, Վանի բարբառում կան *ճըղլակթազ* կամ *չաթալթազ* հոմանիշները՝ մի քանի իմաստով, որոնցից կրոնական են՝ 1) «սաղավարտ», 2) «եպիսկոպոսական թագ»:

5.4.5. Գրական հայերենի *գուրի* հնչարտաբերակը չունեն բարբառները, այլ ունեն հետևյալները (թվով 51). *կոդի*// *կոյը* // *կուրի*// *կուղա*// *կուդին*// *քոքի* և այլն: Ըստ որում մի շարք վայրերում գրաբարյան *գաւրի* ձևի ւ ձայնորդը դարձել է *խ*

(գ'ոխտրի/զ'նխտրէ և այլն): Որոշ տարածքներում գոտի բառին ավելանում է գրաբարյան *ք* հոգնակերտը, որը բառավերջի *ի* ձայնավորի հետ կազմում է *-իք* (>-իկ // -իգ), այլև ձայնավորի փոփոխմամբ՝ *-ակ* և *-ուկ*, ըստ այդմ էլ՝ ընկալվում որպես փոքրացուցիչ-փաղաքշական մասնիկ (թվով՝ 12). *Կնխտրակ/ Կօտրուկ/ Կնխտրք/ գօխտրիկ* (<գաւտ) և այլն. *-իք* (>-իկ // -իգ)-ով կազմությունները հիմնականում բնորոշ են արևելյան, հատկապես պարսկահայ տարածքին: Երբեմն *գոտի* >*կըտտրիկ* բառն ունի «կանացի գլխարկ» իմաստը:

Գլուխ 6. *Նվիրապետությանն առնչվող անվանումների բարբառային դրսևորումները:* Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական կարգերին համապատասխանող սակավաթիվ անվանումներ կան, որ կազմում են բարբառախոս հայերի կրոնականեկեղեցական բառապաշարի մի մասը:

6.1. *Նվիրապետական բարձրագույն կարգ նշող իմաստային միավորներ:* Հասարակության կողմից հիմնականում առանձնացվում է նվիրապետության գլխավոր անձը՝ հայրապետը, որին անվանում են *կաթողիկոս*:

6.1.1. Նվիրապետական կարգ նշող բառերը հիմնականում հունարենից գրական փոխառություններ են, որոնք բարբառներում մեծ մասամբ հանդես են գալիս հնչյունական տարբերակվածությամբ: Ընդհանուր առմամբ չտարբերելով հոգևոր սպասավորների գործառույթները և պարտականությունները՝ ընդունված է բոլորին հիմնականում *տերտեր* կամ *քահանա* անվանելը:

Բարբառների մեծ մասում *կաթողիկոս* բառը հիմնականում ներկայանում է հնչյունական տարբերակներով (թվով՝ 40), թեև կան նաև այլ տարբերակներ՝ *հոգևոր տեր // հոգևոր դեր*, նաև *հայրիկ*, ընդ որում արևելյան և պարսկահայ տարածքի տարբերակները ընդհանուրի մեկ երրորդն են (թվով՝ 14)՝ *կաթըղկոս // կաթաղակոս // կաթէղիկոս // կաթխիկոս // կաթաղագոս // կաթօղուկոս* և այլն, իսկ արևմտյան տարածքում (թվով՝ 14)՝ *կատրիղգոս // կաթաղիկոս // կատաղիկոս // գաթաղոս // գաթգուէս* և այլն:

6.1.2. Կաթողիկոս տիտղոսին համարժեք ուղղափառ եկեղեցու գահակալը կոչվում է *պատրիարք*, որ շատ քիչ բարբառներում է հանդես գալիս այդ ձևով, մյուսներում հայտնի է հնչյունական տարբերակներով՝ *պատրիարք // բադրիօյք // բադիօյք* և այլն:

6.1.3. *Արքեպիսկոպոս* և *քորեպիսկոպոս* բառերը բարբառներում գրեթե չեն գործածվում: *Եպիսկոպոս* բառն ունի հետևյալ հնչատարբերակները. *//իպիկօպոս // էբիսկօբօս // էբիսգաբօս //իպիսկոբոս* և այլն:

6.2. *Նվիրապետական միջին կարգ նշող իմաստային միավորներ:*

6.2.1. Հայ մատենագրության մեջ լայն ուշադրության առարկա *վարդապետ* հասկացության աշխարհիկ և հոգևոր մեկնաբանությունները ինչ-որ չափով ազդել են բարբառային խոսքի տարբերակմանը (թվով՝ 116): Մի շարք վայրերում գործածվում է գրական ձևը. բարբառային հնչատարբերակներից են՝ *վըրտաբէդ // վըրթաբէդ // վըթապէտ // վուրթապէտ* և այլն: Որոշ բարբառներում բառն արտասանվում է առանց *ր* ձայնորդի. *վըթ՞բէդ // վըթյ՞բէդ*: Քիչ թվով տարածքներում

գործածվում են հոմանիշներ. *դէր, ԿէրԿեր/ Դէրդէր* և այլն: Իբրև ծածկանուն՝ նշվում են *մազկոր, պոպոզ* հոմանիշներով:

6.2.2. *Աբեղա* բառը՝ որպես գրական փոխառություն, բարբառներում հանդես է գալիս տվյալ տարածքին հատուկ հնչատարբերակով. *հաբեղա/ապեղո/ափիղա* և այլն: Բառին հոմանիշ են՝ *գըշտուն* (1. «աբեղայացո», 2. «մազեղեն քուրջ կամ մորթի՝ գիշտ հագած մոնթ»), *վեղարավոր* («վեղար կրող»): Կան նաև *աբեղաթող* («բարեկենդանին նվիրված հանգստյան օրեր») և *աբեղածաշ* («աբեղաների կերակուր») անչակից բառերը:

6.3. *Նվիրապետական հասարակ կարգեր նշող իմաստային միավորներ:*

6.3.1. *Սարկավազ* բառը (ըստ Գ. Զահուկյանի՝ ծագումն անհայտ) նույնն է, ինչ հուն. *դիակոնոս* (δίακονος «ծառա, սպասավոր») բառը, որի ուղիղ իմաստը բարբառներում մասամբ է պահպանված: Մի շարք տարածքներ վերջին բաղաձայնից առաջ ունեն *ր (>)* ձայնորդի հավելում՝ *սարգէվարք/ սարկավարք/ սայգավօյք //սարգավորք* և այլն: Բառն ունի լայն ընդգրկում, բնորոշ է բոլոր տարածքներին՝ հավասարապես:

6.3.2. *Կիսասարկավազ* դասն աշխարհական բարբառախոսների կողմից չի սահմանազատվում և բառային առանձին միավորներով չի արտահայտվում:

6.3.3. Բարբառների մի մասում ջահընկալը կոչվում է *լուսարար*, հանդիպում է *ա* ձայնավորի սղմամբ *լուարար* ձևը: Այս բառով է կազմված *լուսարարություն* («եկեղեցու վերակացություն») բաղադրությունը:

6.3.4. Երդմնացուցչությունը նշվում է *խոստովանել* ներգործական սեռի բայով, որն ունի թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ բովանդակություն: *խոստովանել* բային հոմանիշն է *մեղա գալ* հարադրությունը՝ *մղէր գօլ* և *մուղուր իկ*՝ տարբերակներով, *յերդմնակուրոր ըլնել* հարադրությունը ցույց է տալիս գործողության սաստկություն և բազմապատիկություն, *հրաժարիլ* բայը և *հրաժարում* բայանունն ունեն միայն կրոնական բովանդակություն:

Որոշ տարածքներում երդմնեցուցչությունը կոչվում է *խըսդանանք, խօսդըվանանք*, իսկ երդմնեցուցիչը՝ *խօսդանանհայր // խօսդանանքայր* և այլն:

6.3.5. *Դպիր* «քարտուղար, դպիր» բառը փոխառյալ է (մ.պրս. dipir, պրս. dabir). ոչ բոլոր տարածքներում ունի բարբառային տարբերակներ՝ *թըբիր/ դըբիր // Կըպիր/ Կըպըիր*՝ «եկեղեցու սպասավոր կամ տիրացո» ընդհանուր իմաստով:

6.3.6. Բարբառաներում տարբերում են եկեղեցու ամենացածր պաշտոնյաների երկու կարգ՝ *կոչնակ խփող* («համայնքին եկեղեցի հրավիրող սպասավոր») և *եկեղեցու դոնապան* («աղոթատեղիի դուռը առավոտյան որոշակի ժամերի բացող, երեկոյան փակող անձ»), որոնց բարբառային անվանումներից են՝ *ժամահար/ ժամհար/ Ժմխո/ Ժմխար, ժամակոչ/ ժամկոչ // ժամկոց/ ժամգոջ/ իժամկօց/ Ժմգուչ* և այլն:

6.4. *Ընդհանուր նվիրապետական կարգ նշող իմաստային միավորներ:*

Ընդհանուր նվիրապետական կարգ նշող իմաստային միավորներից են Վանի, Սեբաստիայի, Տիգրանակերտի և այլ բարբառներում հանդիպող *փըռոջ/ փօրօջ*

//փըրօր/փըրափեր/ֆըրափեր, պասփոր («ավետարանական կամ բողոքական եկեղեցու քարոզիչ»), *փոանգ/ֆըրանգ/ֆիրանգ/ֆրընգ* («կաթոլիկ կրոնավոր»), այլև *սևակըլոխ/սևակընգյուղ* («կրոնավոր, հոգևորական»)՝ փոխաբերական իմաստով): Հանդիպում են նաև այլ տարբերակներ՝ *սևագըլոխ/ սեվագըլոխ/սըվըգօխ* «վարդապետ կամ արեղա»՝ ընդհանուր իմաստով, իսկ *սև գլուխ* նշանակում է ոչ թե «կուսակրոն», այլ առհասարակ «կրոնավոր, հոգևորական»: Հանդիպում են նաև *մոնթ // մոնթ* «վանական դպրոցի աշակերտ», *նըվիրագ // նըվիրակ* «վանքի համար պտղի, մատաղ և այլ նվիրատվություն հավաքող կրոնավոր՝ վանական պաշտոնյա»

Նվիրապետական նշանակման միավոր է *կարգ* բառը, որի բարբառային տարբերակներից են՝ *գարթ/գուրկ/ գօրք* և այլն, իսկ *կարքավօր/ գարքավօր* բառն առհասարակ նշանակում է «եկեղեցական, հոգևորական»:

6.4.1. Ընդհանուր նվիրապետական բառախմբում քանակային գերակշռությամբ աչքի են ընկնում *փեր* բաղադրիչով կազմությունները: Գրական *փեր* հնչումով տարբերակը ընդգրկում է բարբառային բավականին լայն տարածք՝ թե՛ արևելյան և արևմտյան, թե՛ պարսկահայ. տարբերակներն ունեն հնչյունական որոշակի տարբերություններ՝ *փըր/ փօր/ փայր/ փերա/ դիր/ դիրյր/ դէ/ դէրա* և այլն: Մարաղայի բարբառում *փեր* բառի ձայնավորը երգեցիկ հնչերանգ է ստանում (*փէր*), իսկ Ղարաբաղում առանձնակի շեշտադրմամբ է արտասանվում՝ բառավերջում ստանալով *ը* որոշիչ հոդ (*փա՛րը*): Առտիայի, Ալախբեկի, Ճանիկի, Ռոդոսթոյի, Ղարադաղի և այլ տարածքային տարբերակներում երբեմն քահանային դիմելիս *փեր* կոչականից առաջ ավելանում է *ա՛յ* (>ա >օ >ը) վերաբերականը՝ կերտելով *այփեր* տիպի տարբերակներ՝ *օդէր/օդի/ ադի // ադէր* և այլն: *Տէր* բաղադրիչով են կազմված ածանցավոր *դէրացու/ դիրացու/ փէրօցու* և այլն՝ «տերտեր դառնալ պատրաստվող» իմաստով:

Տիգրանակերտի, Հաջընի, Լեհահայքի, Չեյթունի, Շամախու բարբառներում *փեր* բառը հանդես է գալիս պարս. *բաբ* (*բուբ/ բօբ*) «հայր» բաղադրիչի հետ՝ կազմելով *դէր բօբ/դէյ բօբ/ դէր բաբա/ փեր բաբա* կապակցությունները, ընդ որում երբեմն առանձին՝ *դէր բաբ* կամ միասին՝ *դէրբօբ*, նաև *ասված բաբա* ձևով:

6.4.2. Առանց նվիրապետական կարգի հստակ տարբերակման հոգևոր սպասավոր է նշանակում *փերփեր* բառը, որը, թերևս, այս ոլորտի ամենալայն գործածության և տարածում ունեցող լեզվական միավոր է: Գրական արևելահայերենին յուրահատուկ *փերփեր* հնչումով գործածվում է բոլոր տարածքներում (բացառությամբ արևելյան ենթախոսվածքներից մեկում շեշտված *փէրփեր* արտասանության): Տարածքային ընդգրկման առումով *փերփեր* ձևից հետո լայն գործածություն ունեն *փերդէր* և *դէրդէր* հնչատարբերակները: Կան *փ* խուլի ձայնեղացմամբ, *ր* ձայնորդ կիսաձայնի վերածմամբ կամ անկմամբ, է ձայնավորի երկբարբառացմամբ կամ հնչյունափոխությամբ տարբերակներ՝ *փըրերփըր/փէրդէյ/ փերդէր/ դէրդէր/փէրդէր* և այլն:

«Հիսիսափայլը» հիշատակում է *տերտեր* բառին հոմանիշ *տեր տեր* առանձին գրությանը ձևը՝ բնորոշ Լոռու խոսվածքի Վարդաբլուրի ենթախոսվածքին: Այս օրինակը կարելի է համարել *տեր* բառից *տերտեր* բարդության լեզվական անցման փաստ: Հոգնակիի կազմության և բառաթեքման ժամանակ նշված հարադրության բաղադրիչներն ընկալվում են որպես մեկ ամբողջություն. երկրորդ *տեր*-ն ստանում է *-ներ* հոգնակերտ և *-ի* հոլովակազմիչ: Հմտ. «*Տէր տերի հետ է կամենում պարզել*»: «*Ժամանակիս տեր տերները...*»⁵: Կարելի է ենթադրել, որ առաջին բաղադրիչը նախապես հարգականի իմաստակիր է եղել, իսկ երկրորդը *քահանա* բառի հոմանիշն է:

Որոշ բարբառներ ունեն զուգահեռ գործածություն՝ *տերտեր* և *դերդեր*, *տերդեր* և *կրհանա* և այլն: *Տերտեր* բառին իմաստային որոշակի տարբերակմամբ հոմանիշ են *տիրացու*, *տերտերացու* («տերտեր դառնալ պատրաստվող») կամ «տերտեր լինելու համար հարմար») բառերը՝ հնչատարբերակներով (*տերտերցու* // *տիրցու* // *տերցու* // *դիրցո* և այլն): *Տերտերացու* բառը որոշ բնակավայրերում (Բասենի Տաղվերան, Ապարանի Մելիքյուղ և այլն) ենթարկվել է արտակարգ հնչյունափոխության՝ վերածվելով *տացու* ձևի՝ «գրագետ, իմաստուն, բարեկիրթ (անձ)» իմաստով:

Տեր և *տերտեր* բառերի տարածական-գործառական համեմատությունից պարզվում է, որ երկրորդն ունի ավելի լայն ընդգրկում:

6.4.3. *Քահանայական կարգ նշող իմաստային միավորներ*: Հայերենի տարածքային տարբերակներում *տերտեր* բառին հոմանիշ են *քահանա* և *երեց* բառերը: Առավել գործածական է *քահանա* բառը, որը գրական հայերենին բնորոշ արտաբերմամբ կիրառվում է զգալի թվով բարբառներում: Ոչ պակաս կիրառություն ունեն նաև *քահանա* բառի հնչատարբերակները՝ *քրհանա* // *քահանա* // *քահենո* // *քահեննո* // *քանա* // *քօխօնօ* // *գ'անա* // *գ'րհանա* // *գրհընրա* // *կահանա* // *կահաննա* // *կարհանօ* և այլն:

6.4.4. Նվիրապետությանը հարակից իմաստային միավորներից է *երեց* բառը, որն ունի մեծ մասամբ *երէց* ձևը, իսկ որոշ բարբառներում կրել է հնչյունական տարբեր փոփոխություններ՝ բառասկզբում *հ*-ի հավելում, այլև *ե > է*, *յէ*, *ի*, երկրորդ վանկի *է > ի*, *ե* երկբարբառ, *ր* ձայնորդ *>յ* կիսաձայն, բառավերջին *ց* շնչեղ խուլ *>ս* սուլական, *ծ* խուլ. *հերէց* // *երեծ* // *երից* // *երէս* // *իրէց* // *իյէց* // *իրից* և այլն: Մոկսի բարբառում կա զուգահեռ կիրառություն՝ *յերէց* // *իրից* // *իրեց* // *իրից*: Ոգմում տեղի է ունեցել բառիմաստի նեղացում. *յերէց* նշանակում է «նորընծա քահանա»:

Երբեմն հանդիպող *իրէցփոխ* // *իրիցփոխ* // *իրիցփոխան* // *յերէցփոխան* // *յերէսփոխան* ձևերը նշանակում են ոչ թե «հոգևոր սպասավոր», այլ «եկեղեցու տնտեսական գործերը ղեկավարող աշխարհիկ անձ»: Արևմտյան տարածքի

⁵ Գ. Տէր Յոհաննիսեանց, Տէր Սարգիս, ազգային վիպասանութիւնք, «Հիսիսափայլ», Մոսկվա (ձան. ամսագրում *Յոհաննիսեանց*-ը առանց վ-ի է, *Մոսկվան* վ-ով է-Հ.Մ.), 1861, Չորրորդ տարեգնացք, Ամսատետր 5, էջ 348:

բարբառախոսներին ծանոթ է *տաներեց* (<*տուն+երեց*) բարդությունը՝ «ծխատեր քահանա». *տաներեց* // *տաներէց* // *դաներէց* և այլն: Ունենք նաև *երիցապուն* (<*երեց+ա+պուն*) բարդության *իրիցապուն* հնչատարբերակը՝ «քահանայական ցեղից» իմաստով:

Ընդհանուր նվիրապետական կարգ են նշում *վերակացու* բառի *վըրագէցու* // *վէրադասու* հնչատարբերակները: Ոչ քիչ թվով տարածքներում հանդիպում են *օրհնված* հարակատար դերբայի *օռշնած* և *օրշնից*, *նորընծա* բառի *նօրընծա*, *առաջնորդի* *առաջնօրթ* տարբերակները, իսկ որոշ բարբառների *առաճնորս* // *ոճնօրթ* հնչյունական զուգաբանությունները գործածվում են միայն «կեղեցական գործերի կառավարիչ» իմաստով:

6.4.5. Կրոնանեղեցական բառապաշարին իմաստաբանորեն և գործառույթնապես հարակից են նաև *երեցկին*, *տերտերակին* բառերը:

Ի տարբերություն *երեց* արմատական ածականի՝ *երեցկին* միավորը առավել հաճախակի է գործածվում կրելով հնչյունական տարբեր փոփոխություններ, -*ու* մյուսի դեպքում՝ *երիցկին* // *օրօցկին* // *ըրցկին* // *ըրիցկին* // *ըրցակէն* // *ըրցակէն*, *օրօցկընըտ* // *իրիցկընիկ* և այլն, կը ճյուղի դեպքում՝ *իյիցգին* // *երիցկին* // *իրիճկին* // *իրիճգին* // *իրըցգին* // *իրըցգան* // *էրըսգին* // *իրըձգին* // *իրըզգին* // *իրըսկէին* // *իրիսգին* // *ինիցկին*, *իրըսկընիկ* // *իրիցկընէիկ* և այլն, -*ս* և -*լ* (-*իս*) ճյուղերի դեպքում՝ *իրիցկին* և այլն: Առանձին բարբառներում հանդիպում են բուն անվանմանը համարժեք բառակապակցական հոմանիշներ. *իրիսկին մայրիգ*, *ըրցու կընիկ*, *օրիցին կընէկ* և այլն:

երեցկին բառի հոմանշային շարքում բառակազմորեն ուշագրավ են *տէր* բառով բաղադրվածները՝ հետևյալ կարգով՝ *տեր+ուհի*, *տեր+ա+կին(իկ)*, *այ տեր+ա+կին(իկ)*, *տեր+տեր+ա+կին(իկ)*, *տերի* // *տիրոջ* կամ *տերտերի կին(իկ)*:

ա) *Տեր+ուհի* միավորը որոշ բարբառներում գործածական է գրական ձևով, իսկ մյուսների տարբերակներն են՝ *տիրուհին* // *տիրուհին* // *տիրողնի* // *տըրօխնի* // *տօրօխնի* // *տուրօխնի* // *տէրօխնըէ* // *տէրօխնիք* և այլն: Ի դեպ, *h > խ* (*ղ*) հնչյունական անցումից բացի բերված օրինակներում առկա է ն ձայնորդի հավելում: Այդպես նաև *տըրիտորի* ձևում առկա է *ոխ > խո* դրափոխություն, *տըխտորի* կազմության մեջ *ր* ձայնորդը հայտնվել է բառավերջում:

Տեղի է ունեցել *տիրուհի* - *երեցկին* հասարակ անունից անցում հատուկ անվան, որ լայն տարածում ունի բարբառներում՝ *Տիրօհի* // *Տարուհի* // *Տուրուհի* // *Տըրուհի* // *Դուրուհի* // *Դիրիֆի* և այլն, այդպես նաև՝ *Տըրունի* // *Տիրուն* // *Տիրուխ* // *Տիրօ* // *Դուրիգ* // *Դիրուխ* // *Դիրօ* և այլն:

բ) *Տեր+ա+կին(իկ)* ձևը առաջացել է *տերտերակին* բառի ամփոփումից՝ տարբեր կարգի հնչյունափոխությամբ. *տէրակին* // *տըրակին* // *դիրակէն* // *դըրակէն* և այլն: Որոշ դեպքերում ունենք *տեր+ա+կին+իկ* բաղադրությունը. *դէրակընէտ* // *դիրակընէտ*, նաև *տեր+տեր+ա+կին+իկ* և այլն:

գ) Այ տեր+ա+կին(իկ) միավորը այ կոչականով կազմություն է, որում կոչականի բուն իմաստը մթագնել է. *ըղըրակին // ըղըրկին//աղերակին// աղերակընէգ* և այլն:

դ) *Տեր+տեր+ա+կին* ձևը գրական է, ունի լայն գործածություն բարբառների մի զգալի մասում. գրանցված է վերջնավանկի ձայնավորի որոշակի փակվածքով արտաբերվող *տերտերակին* տարբերակը: Բարբառների մի զգալի մասում ունենք է >ե, ը, ըօ, ի, ա հոդակապի քմայնացում, կոկորդայնացում, սղում կամ ընդգծված շեշտադրում, առոգանական տարբերակում, ի >է անցում և բառասկզբի կամ բառամիջի տ խուլ պայթականի ձայնեղացում, ը ձայնորդի վերածում n թրթռունի, վերջնավանկի կ խուլի ձայնեղացում (նաև քմայնացում) պարունակող տարբերակներ՝ *տերտերագին // տեռտեր՞գին // տըրտըրակին // տերտերկին // տըրտերակին // տիրտիր՞կին // տօրտօր՞կին* և այլն:

Միայն մեկ բարբառում է հանդիպում *տեր+տեր+ա+կին+իկ* բարդ ածանցավոր կառույցը՝ *տերտերակընըօկ*:

ե) «Երեցկին» իմաստն արտահայտվում է *տեր* (նաև *տերտեր*) և *կին+իկ* բաղադրիչներով կառույցով, որը ակտիվ գործածություն ունի *տերտերի կին+իկ // տիրոջ կին+իկ* բառակապակցությամբ. *դէրօ կընէգ// դէրէն կընէգ// դէրային զընիգը// դէրի զընիգ, տիրտերին կընըէկը// տերտըրոջ կընիկ// տերդըրօջ կընիգ// դէրդէրին զընիգը// դէրդըրօժ գընիգ* և այլն: Աղօրը *կընըէկ// ըդէրի կընէկ* բաղադրյալ զուգաբանություններում մթագնել է կոչականի իմաստը:

Ոչ մի քնակավայրում գրանցված չէ *տերտերի կին* բառակապակցությունը, այլ միայն *տերտերի* (կամ *տիրոջ*) *կին+իկ* ձևով է հանդես գալիս:

Մեկից ավելի զուգաբանություններ ունեն սահմանափակ թվով տարածքներ՝ Մարտակերտի Զագլիկ, Նուխիի Սաբաթուու, Խանլար, Ելենսդորֆ: Որոշ քնակավայրերում *երեցկին* բառին որպես հոմանիշ նշվում է *քաշիշի // քէշիշի գէնիգ* կապակցությունը:

ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայերենի բարբառների կրոնատեղեցական հարուստ բառապաշարն ամբողջական է դառնում ի հաշիվ նախ՝ արտահայտության պլանում հնչյունական զուգահեռ ձևերի, սովորական բառերի և տերմինների, օտար բառերի և պատճենումների, արտահայտությունների և դարձվածային միավորների առկայության, ապա՝ բովանդակության պլանում հոմանիշ, հականիշ, նույնանուն և հարանուն բառերի, բազմիմաստության, փոխաբերության, այլև առաձների, ասացվածքների և

շրջասությունների, երդման, օրինանքի ու անեծքի դրսևորման: Այս իրողությունը հատկանշական է բարբառների ընդհանուր բառապաշարի համար՝ առհասարակ, կրոնանկեղեցական և դավանաբանական իմաստային (թեմատիկ) խմբի դեպքում՝ առանձնապես: Երևույթի նման ընդգրկմամբ քննությունն ունի բացառիկ նշանակություն բարբառների բառապաշարի իմաստային (թեմատիկ) այլ խմբերի վերլուծության համար:

2. Բարբառների կրոնական բառապաշարը հիմնականում ավանդված է գրաբարից: Դրա մի մասը քրիստոնեական (աստվածաբանական) ղլրոտի բառեր և արտահայտություններ են՝ հիմնականում վկայված գրական հուշարձաններում, ունեն ոչ միայն սովորական, այլև տերմինային արժեքով գործածություն, մեծ մասամբ բնիկ են, մասամբ՝ փոխառություն կամ անհայտ ծագման, գործածվել են միջին և նոր գրական լեզվում, ներկայումս ունեն իրենց բարբառային դրսևորումները: Իբրև ընդհանուր կրոնական հավատալիք նշող և քրիստոնեական կարգին առնչվող բառեր՝ դրանց բարբառային (խոսակցական) տարբերակները զուգընթաց են միջին, առավել ևս նոր գրական հայերենի տարբերակներին, և ըստ այդմ ամբողջական և հիմնավոր է դառնում պատկերացումը դրանց տարածքային դրսևորումների վերաբերյալ: Դրանք կամ իբրև ընդհանուր կրոնական հավատալիք նշող (Սուրբ Գրքի և հարակից գրականության թարգմանության բերումով հայերենին անցած), կամ կոնկրետ քրիստոնեական կրոնին առնչվող (ինքնուրույն ձեռքբերում հանդիսացած) բառեր են, որոնք, իրենց հերթին, իբրև մեկ ամբողջություն, բաժանվում են մի քանի խմբի, քանի որ վերաբերում են քրիստոնեական վարդապետության դավանաբանությանը, եկեղեցական շինություններին, ծիսակարգին, հոգևոր կարգին (նվիրապետությանը):

3. Հայերենի բարբառների կրոնանկեղեցական բառապաշարի հիմնական մասը քրիստոնեական է՝ չնայած հայերի՝ դարեր շարունակ հեթանոս լինելուն: Հեթանոսական կրոնով պայմանավորված բազմաթիվ բառեր վերաիմաստավորվել են և ներառվել քրիստոնեական բառապաշար: Վերջինս բավականին տարբեր շերտեր ունի. կան լայն տարածում և գործածություն ունեցող, բարբառների մեծ մասին բնորոշ (*աստված, աստվածածին, ժամ, քավոր, քավորգին, խաչ*), սահմանափակ գործածությամբ (*վերնապտու, արյան, անդաստան, գավիթ, թեմ*) և ընդհանրապես բարբառային ձևեր չունեցող (*մաղզմա, դաստառակ, վկա, նափորուր, օվսաննա, վարշամակ*) բառեր:

4. Տարածքային բոլոր տարբերակներին բնորոշ է *աստված* անվանումը՝ հիմնականում հնչատարբերակներով (թվով՝ 51), որոշ վայրերում՝ գրական ձևով: *Աստված* սերող հիմքով բառերը հիմնականում կերտված են սուրբգրային թեմաներով և առավել հետաքրքիր տարբերակները բնորոշ են արևմտյան խմբակցության բարբառներին: Բարբառներում չեն հանդիպում *աստծուն* բնորոշող դավանաբանական հասկացություններ նշող բառաշարքեր, շատ սակավ են աստվածաբանական բովանդակության կամ աստծու հատկանիշները բնութագրող բառերը:

5. Ի տարբերություն *աստված* հասկացության՝ *աստվածածին* անվանումը բնորոշ է միայն քրիստոնեական դավանանքին, ունի տերմինի արժեք (հնչյունական տարբերակները թվով 68 են):

6. *Դրախտ* և *դժոխք* անվանումների բարբառային ձևերը իմաստաբանորեն նույնն են, ինչ հայերենի հին և նոր փուլերի գրական տարբերակները. դրանք բուն իմաստով վերաբերում են կրոնին և հավատքին, փոխաբերական իմաստով ունեն աշխարհիկ բովանդակություն (*ուղիղ իմաստ*→*կրոնական իմաստ*→ *փոխաբերական իմաստ* անցումով): *Դրախտ*-ի տարբերակները հնչյունական են, ունեն հոմանիշներ, անհամեմատ քիչ են գործածական, քան *դժոխք*-ինը: Վերջինս աչքի է ընկնում նաև տարբերակների բազմազանությամբ, հոմանիշների տարբեր զուգորդմամբ (թվով՝ 51):

7. *Ստրանա* բառը ևս գործածական ձևաիմաստային միավորներից է. այն հանդես է գալիս ոչ միայն հնչյունական, այլև իմաստային տարբերակներով, նրանով կազմված միավորների քննությունը ցույց է տալիս, որ դրանք այս կամ այն կերպ և չափով բնորոշ են հայերենի բոլոր տարածքներին, ունեն ընդհանուրհայերենյան բնույթ և քանակապես գերազանցում են *աստված* բառով կազմություններին: Հանդիպում են *ստրանա* հասկացությանը հոմանիշ բառեր՝ առաջ բերելով բազմիմաստություն: Մի քանի բնակավայրերում սատանայի հզորությունն արտահայտվում է հոգնակի թվի միջոցով, և միշտ չէ, որ տվյալ տարածքում կիրառական է եզակի ձևը:

8. Բարբառներում կան մկրտության ծեսին առնչվող որոշակի խումբ բառեր: *Սանահայր* բառն ունի բառային և հնչյունական զուգաբանություններ՝ նույնարմատ և տարարմատ հոմանշային փնջերով, բուն և փոխաբերական իմաստներով. բառի ամենատարածված հոմանիշներից են՝ *կնքահայր* և *կնքավոր*. *կնքահայր* գրական ձևը կա բարբառներից մեկ-երկուսում, մնացածը տարբերակային ձևեր են (թվով՝ 23). կա նաև *կնքարար* (-*պապ*) (թվով՝ 16). *կնքավոր* (թվով՝ շուրջ մեկ տասնյակ), ընդ որում արտասովոր կրճատմամբ և *վ*-ի սղմամբ (թվով՝ 15), *պե*, որ ունի զգալի թվով տարբերակներ (շուրջ մեկ տասնյակ):

9. Ածանցյալ խորհրդանիշների (ծիսական գործողություններ, ծիսաարարողական պարագաներ, պաշտամունքային վայրեր, ժամագրքեր և այլն) անվանումները մասամբ են գործածվում բարբառներում, որովհետև դրանք ավելի շատ գրական են, քան բարբառային կամ տարածքային տարբերակվածություն ունեցող:

10. Աղոթելու գործողությունն նշվում է նաև *խաչակնքել* բառով: *խաչակնքել* գրական փոխառությունը բնորոշ է քիչ թվով բարբառների, մեծ մասում տարբերակային ձևեր են (թվով՝ 14). մեծ թվով բարբառներում գործածվում են *խաչակնքել* բայի նույնարմատ հոմանիշներ (թվով՝ 19), հարադիր բայեր՝ *հանել* բաղադրիչով (թվով՝ 11), *անել*-ով (թվով՝ 5), *քաշել*-ով (թվով՝ 4):

11. Բարբառային անվանումներով հանդես եկող կրոնաեկեղեցական տոներից *զափրկը*, *տառնընդառաջը*, *պահը*, *ավագ շաբաթը*, *վարդավառը* ներկայանում են հնչյունական և իմաստային բազմաթիվ տարբերակներով և հոմանիշներով: Հայերենի գրեթե բոլոր տարածքային տարբերակներն ունեն *փոքր զափրկ*

և մեծ զայրիկ անվանումները՝ որպես Աստվածահայտնության և Հարության տոների նշանակումներ՝ բարբառային հնչյունափոխական և իմաստային տարբերակներով: Ամանոր և Նավասարդ տոնանունները տարածված չեն: Կաղանդ փոխառյալ բառն առավելապես բնորոշ է արևմտյան տարածքի բարբառներին: Միայն *Ջրօրհնեք* բառն ունի քրիստոնեական բովանդակություն:

12. Ծաղկազարդ տոնը բնորոշվում է բառապաշարային մի շարք միավորներով՝ հիմնականում *ծաղիկ* կամ *ծառ* բաղադրիչներով՝ *զարդ* գոյականական կամ *զարդար* բայական հիմքի վրա (հմմտ. *ծաղկազարդ*, *ծառզարդար*): Սրանցից երկրորդի տարածքային տարբերակները քանակով և գործածությամբ ավելին են: *Ծաղկազարդ* անվանումը բարբառներում ունի քիչ թվով տարբերակներ (մոտ մեկ տասնյակ): Այն երբեմն կոչվում է *ծաղզազարթի կիրագի* (*ծ'աղգէզարդի դ'օն*) և հաճախ հիշատակվում է իբրև *ծաղկի տօն* (*ծաղգի* // *ծախկի տօն*, *ծաղկատօն* և այլն): Շատ են տոնն անվանող հոմանիշները՝ կազմված *ուռենի* բաղադրիչով, ընդ որում տարատեսակ հնչյունափոխությամբ, կա *վարդավառ* և *վիճակ* տոնանունների շփոթություն: *Ջալիկ* բառին համարժեք *հարություն* ձևն ունի սահմանափակ գործածություն: Չնայած Հարության տոնի առանձնակի և նշանակալից լինելուն, դրան առնչվող և բնութագրող ձևաիմաստային միավորները քանակով պակաս են՝ ի համեմատություն, օրինակ, Ծաղկազարդի տոնի: *Վարդավառ* գործուն բառաշերտի միավորը բարբառներում նշվում է 160 տարբերակներով, զուտ գրական ձև չի հանդիպում:

13. *Եկեղեցի* բառն ունի հարյուրի հասնող հնչյունական տարբերակներ և հոմանիշներ՝ *ժամ*, *ժամապուն*, *վանք*, *սուրբ*, *սրբապեղ*, նաև բառակապակցական անվանումներ (*աստծու խորան* // *աստծու տաճար*):

14. Ծիսապաշտամունքային պարագաների բարբառային անվանումներն ընդհանուր առմամբ երկու տասնյակից ավելին են, որոնց մի մասն է առավել գործածական նոր գրական հայերենում, և դրանցից շատ քիչ բառեր՝ որպես գրական փոխառություններ, անցել են բարբառներին: Հոգևոր հագուստի և նվիրական առարկաների բարբառային անվանումները բավականին քիչ են, այլև ունեն սակավ գործածություն: *Աքեմ* անվանումը որևէ բարբառում չի հանդիպում, և քանի որ չի ընկալվում նաև հագուստի մյուս՝ *փիլոն*, *շուրջառ* տեսակների ձևային և նվիրապետական նշանակությունը, ուստի դրանք դիտվում են նույնանիշներ՝ դրանց փոխարեն առավելապես գործածելով *կապա*, *արա*, *փարաջա* բառերը:

15. Նվիրապետության կարգ նշող իմաստային միավորները միանգամայն տարբեր են մյուս միավորներից՝ իրենց լեզվական և արտալեզվական պայմանավորվածությամբ: *Կաթողիկոս* բառը մեծ մասամբ ներկայանում է ծայնավորական և բաղաձայնական փոփոխությամբ, թեև կան նաև այլ տարբերակներ՝ *հոգևոր դեր*, նաև *հայրիկ* և այլն: *Արքեպիսկոպոս* և *քորեպիսկոպոս* բառերը բարբառներում գրեթե չեն գործածվում: Հունարենից փոխառված *եպիսկոպոս* բառն ունի միայն հնչատարբերակներ (թվով՝ 15): *Վարդապետ* բառը կա բարբառներում՝ հարյուրից անցնող տարբերակներով և մի քանի հոմանիշներով:

Նվիրապետական կարգին վերաբերող *տէր* բառը և դրանով կազմված *տէր-տէր* բարդությունն աչքի են ընկնում բավականին լայն տարածվածությամբ և գործածությամբ:

16. Կրոնակեղեցական բովանդակություն ունեն նաև *երեցկին, տերտերակին* բառերը: Առաջինն ավելի հաճախակի է գործածվում՝ հնչյունական տարբեր փոփոխություններով: Բառի հոմանիշներից են *տէր* բառով բաղադրված *տերուհի, տերակին(իկ), այ տերակին(իկ)*, նաև *տերի, տիրոջ // տերտերի կին(իկ)* տարբերակները՝ տարբեր հնչյունափոխությամբ (թվով՝ 20): *Տեր+տեր+ա+կին(իկ)* ձևը գրական է, իսկ բարբառների մի զգալի մասում ունի լայն գործածություն՝ ձայնավորների և բաղաձայնների փոփոխությամբ:

Այսպիսով, բարբառների կրոնակեղեցական բառապաշարի քննությունը որոշակի պատկերացում է տալիս հայերենի զարգացման պատմության վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում բառապաշարի իմաստային (թեմատիկ) այլ խմբերի ուսումնասիրության համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում

1. Մեսրոպյան Հ., Կրոնակեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, «Ասողիկ» հրատ., Երևան, 2016, 352 էջ:
2. Մեսրոպյան Հ., Գրական հայերեն և բարբառ, «Ճարտարագետ» հրատ., Երևան, 2008, 44 էջ:
3. Մեսրոպյան Հ., «Սուրբ» բառի գործածության առանձնահատկությունները հայերենի տարբեր դրսևորումներում, «Էջմիածին» (ամսագիր), Ս. Էջմիածին, 2001, Ե, 85-93:
4. Մեսրոպյան Հ., Երևանի բարբառի ընդհանուր բնութագիրը, «Երևան» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2006, էջ 122-131:
5. Մեսրոպյան Հ., Ամանորի բառանվանումները հայերենի բարբառներում, «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, 2007, էջ 118-122:
6. Մեսրոպյան Հ., Աստվածաշնորհության վայրի բառանվանումները հայերենի բարբառներում, «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», պրակ 2, «Լինգվա» հրատ., Երևան, 2008, էջ 115-120:
7. Մեսրոպյան Հ., Պարսկահայ խօսաձևների լեզվաաշխարհագրական բնութագիրը եւ բարբառախօսների տեղաշարժերը, Proceedings of the first International Armenology and Iranology Conference, Department of Armenian Language and Literature University of Isfahan, Isfahan, 2008, էջ 13-22:
8. Մեսրոպյան Հ., Հայրենակցական միությունները և հայերենի բարբառները, «Էջմիածին» (ամսագիր), Ս. Էջմիածին, 2008, Դ, էջ 87-93:
9. Մեսրոպյան Հ., Ռումինահայ գաղութի և ռումինահայերի բարբառի մասին, «Էջմիածին» (ամսագիր), Ս. Էջմիածին, 2008, Ժ, էջ 62-68:

10. Մեսրոպեան Հ., Տիգրանակերտի բարբառի կրօնակեղեցական բառաշերտի քննություն, «Տիգրան Մեծ» (մեկ աշխատանքի ցուցահանդես), «Աշխարհի հայ նկարիչների միավորում» հ/կ, Երևան, 2010, էջ 227-237:
11. Մեսրոպյան Հ., Համշենահայության տեղաշարժերը և բարբառային առանձնահատկությունները, «Բանբեր» Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի. «Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն», պրակ է, «Լինգվա» հրատ., Երևան, 2010, № 2, էջ 160-169:
12. Մեսրոպյան Հ., «Բուրվառ» ծիսական անօթի բարբառային զուգաբանությունները, «Էջմիածին» (ամսագիր), Ս. Էջմիածին, 2011, Դ, էջ 120-126:
13. Մեսրոպյան Հ., Իսլամաբանությունները հայերենի բարբառներում, «Մատենադարանի հին ձեռագրերի իրանագիտական արժեքը», «Մատենադարան» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2011, էջ 89-114:
14. Մեսրոպյան Հ., Երևանի բարբառի կրօնակեղեցական բառաշերտը, Երևան քաղաքի պատմության թանգարան, «Երևան-3» (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2012, էջ 82-92:
15. Месропян А., Диалектные эквиваленты $a\theta t^{\circ}k^{\circ}$ “молитва”, Российская академия наук, Институт лингвистических исследований, IX международная конференция по армянскому языкознанию, Сборник тезисов, «Нестор-История», Санкт Петербург, 2012, էջ 128-133:
16. Մեսրոպյան Հ., Աստվածածնի պատվանունները հայերենի բարբառներում, «Ջահուկյանական ընթերցումներ», «Ջանգակ» հրատ., Երևան, 2012, էջ 172-183:
17. Մեսրոպյան Հ., Ծաղկազարդի բարբառային անվանումները, «Ջահուկյանական ընթերցումներ», «Ասողիկ» հրատ., Երևան, 2014, էջ 105-112:
18. Մեսրոպյան Հ., *Երեցկին* հասկացության բարբառային արտահայտությունները, «Ջահուկյանական ընթերցումներ», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2015, էջ 121-127:
19. Մեսրոպյան Հ., *Խաչ* հասկացության բարբառային համապատասխանակները, «Գիտական տեղեկագիր» Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, պրակ Բ, № 1, 2014, էջ 86-92:
20. Մեսրոպյան Հ., *Դրախտ* և *դժոխք* հասկացությունների բարբառային դրսևորումները, Armenian Language Contacts Through the Ages, Abstracts, International Conference, 2015, Institute for Linguistic Studies Russian Academy of Sciences, St. Peterburg, Nestor-Historia, 2015, էջ 34-36:
21. Месропян А., Понятие *սատանա* [satana] “дьявол” в армянских диалектах, SocioBrains, International scientific refereed indehed online journal, with impact factor, www.SocioBrains.com, publisher: “Smart ideas-wise decisions” Ltd., Konstantin Preslavsky University of Shumen, Bulgaria, issue 25, september, 2016, էջ 10-17 [<http://sociobrains.com/bg/top/issues/issue-25%2C-sept-2016/>]:

22. Մեսրոպյան Հ., Հայերենի բարբառների բառապաշարի կրոնաեկեղեցական բառաշերտի առանձնացման մի քանի սկզբունքների մասին, «Լեզու և լեզվաբանություն», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, № 1 (14), էջ 31-39:
23. Մեսրոպյան Հ., Կրոնաեկեղեցական բառերը գրաբարում և դրանց անցումը բարբառներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, № 2 (647), մայիս-օգոստոս, էջ 152-164:
24. Մեսրոպյան Հ., Կրոնական համոզմունք արտահայտող բառերի բարբառային բնութագիրը, «Բանբեր Երևանի պետական համալսարանի. Բանասիրություն», ԵՊՀ հրատ., Երևան, 2016, № 2 (20), էջ 48-58:

МЕСРОПЯН АЙКАНУШ ОВСЕПОВНА

РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНАЯ ЛЕКСИКА В АРМЯНСКИХ ДИАЛЕКТАХ

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.01 – “Армянский язык”.

Защита состоится 23. 01. 2017 г. в 15⁰⁰ ч. на заседании специализированного совета 019 ВАК по лингвистике при Институте языка им. Р. Ачаряна НАН РА (адрес: 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15).

РЕЗЮМЕ

В данной работе впервые проводится исследование лексико-семантической группы религиозно-церковных наименований территориальных вариантов армянского языка.

Собранный в последние десятилетия большой материал по диалектологии предоставляет возможность провести отдельный и целостный анализ фонетических, словообразовательных, семантических, а также территориально-функциональных и стилистических особенностей религиозно-церковных слов (терминов), представленных в диалектах.

Предметом исследования в настоящей работе являются диалектные варианты слов и выражений, относящихся к христианству, в частности, к армянской апостольской церкви. Эти диалектные варианты являются распространенными лексическими единицами, которые по своему происхождению восходят в основном к периоду древнармянского литературного языка (грабар), создаются в среднеармянском и новоармянском (ашхарабар) языках, а также в диалектах.

В диссертации проведена семантико-функциональная классификация, дифференциация синонимических рядов и оборотов, выделение и анализ фольклорных единиц, детальное изучение и вскрытие их фонетических функций, с акцентом в основном на семантическое рассмотрение лексического состава и использование или неиспользование того или иного слова на определенной территории. В работе определена причастность большинства из них либо к диалектам, либо к диалектным ареалам.

Особое внимание обращено также на эвфемистические слова и словоформы, свойственные диалектам, отмечены стилистические проявления диалектных слов. Исследование проводилось с использованием синхронического и диахронического методов. При тематическом распределении материала мы руководствовались семантикой религиозно-церковных слов и их соотносительностью с тем или иным семантическим полем.

В диссертации картина территориальной принадлежности религиозно-церковных слов представлена в соответствии с многопризнаковыми статистическими принципами, разработанными в трудах академика Г. Б. Джаукяна.

Данные исследования были извлечены из монографий, посвященных изучению армянских диалектов, из фольклорной диалектной литературы, словарей, включающих лексику разных периодов развития армянского языка, из тетрадей института языка НАН РА, соответствующих программ по сбору материалов диалектологического атласа с 500 местожительствами.

Диссертация состоит из введения, шести глав, выводов, списка сокращений и списка использованной литературы (всего 350 страниц).

Во **Введении** отмечаются лингвокультурные особенности лексико-семантической группы религиозно-церковных наименований, научная значимость, общая структура работы, источники исследования, которые в той или иной степени связаны с данной темой.

В **первой главе** нами выделены религиозно-церковные слова, перешедшие из древнеармянского литературного языка, представлены не только единицы, указывающие на общие религиозные верования и христианскую религию, в частности, связанные с вероисповеданием и архимандрией, но и заимствования. Предметом особого внимания стали также названия церковных построек, слова, указывающие на общие, а также отдельные обряды. Рассматривается церковная лексика, перешедшая из древнеармянского языка (грабара) в диалекты, а также названия предметов посуды, одежды, используемой во время ритуалов, наконец, слова, относящиеся к религиозным праздникам и духовенству.

Во **второй главе** представлены диалектные варианты церковной лексики, отличающиеся функциональной частотностью и общностью. Особое внимание обращено также на те слова, которые были включены в “Программу по сбору материалов армянского диалектологического атласа”. Исследованы стилистические и функциональные особенности слов с религиозным компонентом *սւրբ* [surb] “святой”, территориальная распространенность лексических изоглосс понятия *սուսիւծ* [astvac] ”бор”, дан анализ титулов богоматери, народные восприятия понятий *դրախտ* [draxt] “рай”, *դժոխք* [džoxk^c] “ад”, *սատանիս* [satana] “сатана, дьявол”.

Третья глава посвящена рассмотрению наименований достаточно разных, причем не только в плане формы, но и с точки зрения лексической, звуковой и семантической дифференциации основных христианских символов. В ней обобщается диалектное описание понятий *հավատ* [havat] “вера”, *հավատացալ* [havatac^{ya}l] “верующий”, *աղոթք* [ałot^ck^c] “молитва”, *մկրտություն* [mkrtut^cyun] “крещение” и смежных с ними понятий, а также рассматриваются наименования, связанные с осенением креста и таинством причащения. В работе подробно останавливаемся на рассмотрении диалектных наименований отмеченного порядка.

Предметом отдельного изучения в **четвертой главе** являются диалектные проявления наименований религиозно-церковных праздников, в частности изучается лексика, связанная с такими праздниками, как *սուսիւծահայտնություն* [astvacahaytnut^cyun] “явление Христа”, *տյանընդհանուց* [tyaɛnɛndaɾaɟ] (арм.) “терндез”, *ծաղիւսգիր* [całkazard] “вербное воскресенье”, *հարություն* [harut^cyun] “воскресенье”, *վարդապետություն* [vardavaɟ] “преображение”, *սուսիւծ օր* [avag šabat^c] “святая неделя”, *մեծ ցուխք* [mec pahk^c] “великий пост” и т. д. Отдельно рассматриваются особенности восприятия и дифференциация праздничных дней.

В **пятой главе** исследуются группы слов со значениями места благочестия, ритуальных сосуов и приспособлений, в частности входящие в их состав следующие слова: *կոճակ* [koč^cnak] “(церковный) колокол”, *շարակ* [šarakan] “шаракан, армянское церковное песнопение”, *երկում* [erdum] “клятва”, *ճամերգություն* [žamergut^cyun] “богослужение”, *Սուսիւծաշունչ մատյան* [astvacasunč^c matyan] “Библия”, *սուրբ գրքեր* [surb grk^cer] “священные писания”. В главе приводятся

диалектные варианты названий богослужения, анализ лексических и фонетических сопоставлений ритуального сосуда *բուրժառ* [burvaʒ] “кадило”, духовных символов *խուճկ* [xunk] “ладан”, *մոմ* [mom] “свеча”, а также лексики, связанной с наименованием церковной одежды и обрядовых предметов.

В **шестой главе** изучается территориальное и функциональное распределение тематических единиц, связанных с христианской иерархией. Представляются общие иерархические названия - *կաթողիկոս* [katʰoɫikɔs] “католокос”, *պատրիարք* [patriarkʰ] “патриарх”, *եպիսկոպոս* [episkopos] “епископ”, названия священников различных рангов - *վարդապետ* [vardapet], *աբեղա* [abeta], *սարկավազ* [sarkavag], *երրմսնեցուցիչ* [erdmnesʰicʰicʰ], *դրնապան* [dʁnapan], *ջահրնկալ* [jahenkal].

Фольклорные материалы, включенные в работу, могут быть использованы для различных исследований диалектов. Языковые факты помогут в составлении диалектных, религиозных словарей, а также могут быть использованы при рассмотрении и корректировании соответствующих концептуальных и семантических изоглосс.

HAYKANUSH MESROPYAN

RELIGIOUS-ECCLESIASTIC VOCABULARY IN ARMENIAN DIALECTS

The thesis claiming a scientific degree of a doctor of philological sciences on the specialty 10. 02. 01- Armenian Language.

The defense will be held on 23.01.2017, 15:00 at the session of Specialized Council on Linguistics 019 HAC at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences of RA (Address: 15 Grigor Lusavorich, Yerevan, Armenia).

SUMMARY

In the present dissertation the vocabulary examination of lexico-semantic group of religious-ecclesiastical terms of territorial versions in Armenian is carried out for the first time.

A large amount of dialectal material collected in the last decades makes possible a separate and complete investigation of phonetic, word-formation, semantic, as well as territorial-functional and stylistic peculiarities of religious-ecclesiastical terms in dialects.

The object of investigation in the present work are dialectal variants of words and expressions concerning Christianity, particularly the Armenian Apostolic Church. They are widely-used lexical units coming mainly from the Old Armenian (Grabar) period, and being formed in Middle Armenian and Modern Armenian (Ashkharhabar), as well as in dialects.

In the dissertation semantic-functional classification of religious-ecclesiastical vocabulary is made, differentiation of synonymous expressions, as well as of folklore unit, or a detailed study and analysis of phonetic functions is carried out, focusing mainly on the semantic examination of the vocabulary and the use of this or that word on a certain territory. It is determined whether the usage of this or that word in some area is inherent to the majority of dialects or to the dialectal islets.

A special attention has been made also to the euphemistic words and forms typical to dialects, stylistic manifestations of dialectal words were also presented. The research has been conducted using both synchronic and diachronic methods. While dividing the material thematically the religious-ecclesiastical meanings of words and their belonging to this or that semantic field has been taken into account. The territorial belonging of religious-ecclesiastical words is presented according to the statistical many-featured principles which have been developed in G. Jahukyan's works.

Relevant data were taken from monographs devoted to the Armenian dialects, dialectal folkloristic literature, dictionaries covering the word-stock of different phases of development of the Armenian language, from dialectal notebooks of NAS of Institute of Language corresponding programmes of collection of more than 500 settlements' dialectal atlas.

The dissertation consists of an introduction, six chapters, conclusions, abbreviations and list of literature (350 p.).

In the **Introduction** the linguo-cultural peculiarities of religious-ecclesiastical semantic group, the scientific importance, the general structure of the work, sources of the included material relevant to the work are presented.

The **first chapter** refers to the identification of religious-ecclesiastical words derived from old literary Armenian. The chapter presents not only the ecclesiastical words indicating religious belief and Christianity, particularly the words concerning the doctrine and theology, but also loan words. Special attention is paid to the words indicating ecclesiastical buildings and common rite and liturgy. The dialectal words indicating the liturgical items, clothing and utensils derived from old Armenian as well as the words indicating religious ceremonies and religious holidays are discussed in the chapter.

In **the second chapter** the dialectal variants of the religious word-group endowed with operational frequency and commonness are introduced. The religious-ecclesiastical words included in the "Armenian dialectal atlas materials' collection program" are discussed. The stylistic and functional characteristics of the words with the component *սուրբ* [surb] "saint", the territorial scope of lexical isogloss of the concept of *աստուծո* [astvac] "God", are considered the analysis of the honorable names of *the Virgin Maria*, is made, as well as the popular perceptions of the concepts *դրախտ* [draxt] "paradise", *դժոխք* [džoxk^c] "hell" and *սատանա* [satana] "Satan, devil" are discussed in the chapter.

The **third chapter** deals with dialectal expressions of the names of main Christianity symbols. The chapter sums up not only the dialectal description of *հավատ* [havat] “faith”, *հավատացյալ* [havatac^cyal] “believer”, *աղոթք* [a^lot^ck^c] “prayer”, *մկրտություն* [mkrut^cyun] “baptism”, and related concepts but also the observation of the words indicating crossifying and the sacrament. The dialectal names of Christianity symbols are also very diverse not only in terms of the type but also in terms of differentiating between phonetic and semantic characteristics. This kind of dialectal names are thoroughly dealt with through the whole work. .

In the **fourth chapter** a particular attention is paid to dialectal expressions nominating religious-ecclesiastical holidays, particularly from the Feasts of Jesus Christ the following ones are discussed: *Աստվածահայտնություն* [astvacahaytnut^cyun] “the Apparition”, *Տյանընդառաջ* [tya^zn^əndara^z] “Candlemas Day (Tyarndarach)”, *Ծաղկազարդ* [ca^zkazard] “Palm Sunday”, *Հարություն* [harut^cyum] “the Resurrection and *Վարդավառ* [vardava^z] “the Transfiguration”, *Ավագ շաբաթ* [avag šabat^c] “Holy Week” and *Մեծ պահք* [mec pahk^c] “Great Lent” and the words connected with them, as well as the territorial names of their synonymic rows are examined. The peculiarities of perceptions and the differentiation of the names of holidays are considered.

In the **fifth chapter** the semantic fields of the piety place, liturgical vessels and accessories as well as their linguistic meanings are examined, in particular, *կոճակ* [ko^znak] “church bell”, *շարական* [šarakan] “church chant”, *երդմ* [erdum] “oath”, *ժամերգություն* [žamergut^cyun] “divine service”, *Աստվածաշունչ մատյան* [astvacasunč^c matyan] “Bible” and *սուրբ գրքեր* [surb grk^cer] “holy books”. Dialectical variants of the ritual components of light are presented, lexical and phonetic comparisons of religious symbols of *խունկ* [χunk] “incense” and *մոմ* [mom] “candle”, *բուրվառ* [burva^z] “ritual vessel of a censer”, the word stock concerning religious clothing and sacred objects are analyzed.

The **sixth chapter** deals with territorial and functional distribution of thematic units related to Christian hierarchy. General hierarchic names of Armenian church (*կաթողիկոս* [kat^oɪikos] “Catholicos”, *պատրիարք* [patriark^c] “Patriarch”, *եպիսկոպոս* [episkopos] “Bishop”), priestly (*վարդապետ* [vardapet] “priest”, *աբեղա* [abeta] “monk”) and ordinary (*սարկավագ* [sarkavag] “deacon”, *երդմնեցուցիչ* [erdmne^cucⁱč^c] “exorcist”, *դննապան* [dn^znapan] “concierge”, *ջահրնկալ* [džah^ənk^{al}] “acolyte”) are presented.

The folkloristic material included in the work can be used in various studies of dialects. The language data will help to compile dialectal, religious dictionaries. They can also be used while examining and clarifying conceptual and semantic isoglosses.

